

Հավելված

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2010 թվականի ապրիլի 13-ի թիվ 72-Ն որոշմամբ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2010 թվականի ապրիլի 13-ի
թիվ 72-Ն որոշմամբ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՀՀ ֆինանսների նախարարի
2010 թվականի -----ի թիվ --- հրամանով

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝

----- Արթուր Զավադյան
-----2010 թ.

ՀՀ ֆինանսների նախարար՝

----- Տիգրան Դավթյան
-----2010 թ.

**ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՕՐԻՆԱԿԵԼԻ ՉԵՎԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ**

Գլուխ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վճարահաշվարկային կազմակերպությունների (այսուհետ՝ վճարահաշվարկային կազմակերպություններ) հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների օրինակելի ձևերն ու դրանց լրացման կարգը:

Գլուխ 2. ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վճարահաշվարկային կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների հրապարակումն իրականացվում է «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ, «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ և 6.1-րդ հոդվածների պահանջների, ինչպես նաև Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (այսուհետ՝ նաև ՖՀՄՍ) համապատասխան:

3. Վճարահաշվարկային կազմակերպությունների հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների նպատակը կազմակերպության ֆինանսական վիճակի, գործունեության ֆինանսական արդյունքների և կանխիկ դրամական հոսքերի, ֆինանսական վիճակի փոփոխությունների վերաբերյալ կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների օգտագործողներին արժանահավատ տեղեկատվության տրամադրումն է:

Վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից հրապարակվող տարեկան ֆինանսական հաշվետվությունները ներառում են.

- 1) «Հաշվետվություն ֆինանսական վիճակի մասին» հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ՝ ձև 1 (հավելված 1),
- 2) «Հաշվետվություն համապարփակ ֆինանսական արդյունքների մասին» հաշվետու ժամանակաշրջանի համար՝ ձև 2 (հավելված 2) կամ ձև 2.1 և ձև 2.2 (հավելված 2.1),
- 3) «Հաշվետվություն սեփական կապիտալում փոփոխությունների մասին» հաշվետու ժամանակաշրջանի համար՝ ձև 3 (հավելված 3),
- 4) «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին» հաշվետու ժամանակաշրջանի համար՝ ձև 4 (հավելված 4),
- 5) «Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ», որոնք պարունակում են տեղեկատվություն էական հաշվապահական քաղաքականությունների վերաբերյալ կամ այլ բացատրական գրառումներ՝ ձև 5 (հավելված 5):
- 6) «Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն ամենավաղ համադրելի ժամանակաշրջանի սկզբի դրությամբ»՝ ձև 6, երբ տեղի է ունեցել ֆինանսական հաշվետվությունների տարրերի վերադասակարգում, վերազնահատում, վերաներկայացում:

4. Ֆինանսական հաշվետվությունների փաթեթում ներառված յուրաքանչյուր հաշվետվություն պետք է ներկայացվի հավասար կարևորությամբ:

5. Վճարահաշվարկային կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները լրացվում են կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման հաշվային պլանի հիման վրա:

6. Վճարահաշվարկային կազմակերպությունը ֆինանսական հաշվետվությունների հետ միասին պետք է հրապարակի ատղիտորական եզրակացությունը:

7. Ֆինանսական հաշվետվությունների համախմբման դեպքում վճարահաշվարկային կազմակերպությունը պետք է հրապարակի համախմբված ֆինանսական հաշվետվությունները: Վճարահաշվարկային կազմակերպությունը կարող է հրապարակել նաև առանձին ֆինանսական հաշվետվությունները:

8. Ֆինանսական հաշվետվությունները կազմվում են վերլուծական (անալիտիկ) և ընդհանրացված (սինթետիկ) հաշվառման տվյալների հիման վրա:

9. Վճարահաշվարկային կազմակերպությունները նախորդ տարվա էական սխալները, որոնք բացահայտվել են հաշվետու ժամանակաշրջանում, պետք է ճշգրտեն հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտ 8-ի (այսուհետ՝ նաև ՀՀՄՍ) համաձայն:

10. Վճարահաշվարկային կազմակերպությունները հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած դեպքերը, որոնք վերաբերում են հաշվետու ժամանակաշրջանին, պետք է բացահայտեն հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտ 10-ի համաձայն: Վճարահաշվարկային կազմակերպությունները պետք է ներկայացնեն նաև ֆինանսական հաշվետվությունների վավերացման օրը և այն, թե ում կողմից են հաշվետվությունները վավերացվել:

11. Վճարահաշվարկային կազմակերպությունները, որոնց ֆինանսական հաշվետվությունները համապատասխանում են ՖՀՄՍ-ների պահանջներին, պետք է իրականացնեն բացահայտ նշում համապատասխանության մասին ծանոթագրություններում: Կազմակերպությունը չի կարող նկարագրել ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ներին համապատասխան, եթե չեն բավարարվում ՖՀՄՍ-ների բոլոր պահանջները:

Գլուխ 3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

12. Վճարահաշվարկային կազմակերպության ֆինանսական հաշվետվությունները պետք է ներառեն նրա բոլոր տարածքային ստորաբաժանումների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս գտնվող մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գործունեության ցուցանիշները:

13. Հաշվետու տարի է համարվում տվյալ տարվա հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակաշրջանը:

14. Նոր ստեղծված վճարահաշվարկային կազմակերպության համար առաջին հաշվետու տարի (ժամանակաշրջան) է համարվում նրա պետական գրանցման օրվանից մինչև տվյալ տարվա (ժամանակաշրջանի) վերջին օրը ներառյալ ընկած ժամանակաշրջանը:

15. Լուծարվող վճարահաշվարկային կազմակերպությունը ներկայացնում է ֆինանսական հաշվետվություններ տարեսկզբից մինչև սահմանված կարգով լուծարման գործընթացի սկիզբն ընկած ժամանակաշրջանի համար:

16. Ֆինանսական հաշվետվությունները պետք է ունենան հետևյալ պարտադիր վավերապայմանները.

- 1) ֆինանսական հաշվետվության անվանումը,
- 2) հաշվետու ամսաթիվը կամ ժամանակաշրջանը, որի համար կազմված է հաշվետվությունը,
- 3) կազմակերպության լրիվ անվանումը,
- 4) գտնվելու վայրը,
- 5) թվային ցուցանիշների ներկայացման չափը (ֆորմատը),
- 6) պատասխանատու անձանց ստորագրությունը:

**Գլուխ 4. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ
(ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ)**

17. Ֆինանսական վիճակի մասին հաշվետվության 2-րդ սյունակում ցույց են տրվում նախորդ տարվա վերջի դրությամբ մնացորդները, իսկ 3-րդ սյունակում՝ հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջի մնացորդները:

18. Ստորև բերված աղյուսակում ներկայացված են հաշվետվության և դրան համապատասխան կից ծանոթագրությունների հոդվածներում ներառվող հաշվապահական հաշվառման հաշվային պլանի հաշիվները:

	Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	Կից ծանոթագրություններ	Հաշվապահական հաշվառման հաշվային պլանի հաշիվներ
1.1	Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	Կազմակերպության դրամարկղում, բանկի հաշվարկային, արտարժույթային և այլ հաշիվներում առկա դրամական միջոցների, ինչպես նաև դրամական միջոցների համարժեքների (կարճաժամկետ բարձր	251,252,253,254,257

		իրացվելի ներդրումներ, որոնք հեշտ փոխանակվում են դրամական միջոցների որոշակի գումարների հետ, և որոնց արժեքի փոփոխման ռիսկն էական չէ) հաշվեկշռային արժեքը	
1.2	Առևտրային նպատակով պահվող ֆինանսական ներդրումներ		231
1.3	Դեբիտորական պարտավորություններ գործառնությունների գծով		221, 223 (վաճառքների գծով դեբիտորական պարտքերին վերաբերող մասով)
1.4	Այլ դեբիտորական պարտավորություններ, այդ թվում՝		222,223,225,227,228, 229
		Այս և հաջորդ տողում ցույց են տրվում 1.4 տողում ներառված այլ դեբիտորական պարտավորությունների այն հոդվածների անվանումները և գումարները, որոնք իրենց բնույթով (գործառնությամբ) կամ գումարով առավել էական են տվյալ կազմակերպության համար կամ որոնց առանձին բացահայտումը պահանջվում է հաշվապահական հաշվառման ստանդարտներով:	
1.5	Տրված ընթացիկ կանխավճարներ		224
1.6	Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ		143,232
1.7	Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ		146,237
1.8	Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ		144,233,234
1.9	Ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալում		141,142,149
1.10	Հիմնական միջոցներ		111,112,113,114,115, 124
1.11	Անավարտ ոչ նյութական ակտիվներ		118,124
1.12	Ոչ նյութական ակտիվներ		131, 132, 136(բացառությամբ գույքիլիին և մշակման ընթացքում գտնվող ոչ նյութական ակտիվներին վերաբերող մասի)
1.13	Հետաձգված հարկային ակտիվներ		151
1.14	Այլ ակտիվներ, այդ թվում՝		211,213,214,216,217, 218 (նյութերին,արագամ աշ առարկաներին, անավարտ արտադրանքին, սպրանքներին վերաբերող մասով), 119,121,122,123,124 (ֆինանսական վարձակալությամբ ստացված

			հիմնական միջոցներին և ներդրումային գույքին վերաբերող մասով), 133,136 (նշական ընթացքում գտնվող ոչ նյութական ակտիվներին), 145,147,148,149,152,154,155,235,236239,255,256,261
		Այս և հաջորդ տողում ցույց են տրվում 1.14 տողում ներառված այլ ակտիվների այն հոդվածների անվանումները և գումարները, որոնք իրենց բնույթով (գործառնություն) կամ գումարով առավել էական են տվյալ կազմակերպության համար կամ որոնց առանձին բացահայտումը պահանջվում է հաշվապահական հաշվառման ստանդարտներով:	
2.1	Բանկերից ստացված վարկեր և այլ փոխառություններ		411,412,413,414,511,512, 513,514,516 (կարճաժամկետ փոխառություններին և երկարաժամկետ փոխառությունների կարճաժամկետ մասին վերաբերող մասով)
2.2	Ստացված ընթացիկ կանխավճարներ		523
2.3	Կրեդիտորական պարտավորություններ գործառնությունների գծով		521
2.4	Այլ կրեդիտորական պարտքեր, այդ թվում`		524,525,527,528,529,531
		Այս և հաջորդ տողում ցույց են տրվում 2.4 տողում ներառված այլ կրեդիտորական պարտավորությունների այն հոդվածների անվանումները և գումարները, որոնք իրենց բնույթով (գործառնություն) կամ գումարով առավել էական են տվյալ կազմակերպության համար կամ որոնց առանձին բացահայտումը պահանջվում է հաշվապահական հաշվառման ստանդարտներով:	
2.5	Վարձակալության գծով վճարվելիք գումարներ		515
2.6	Պահուստներ		543, 425 պարտավորություն ճանաչված ոչ ընթացիկ պահուստների հաշվեկշռային արժեքը

2.7	Եկամուտներին վերաբերող շնորհներ		541(դեռևս եկամուտ չճանաչված) մնացորդը
2.8	Հետաձգված հարկային պարտավորություններ		422
2.9	Ակտիվներին վերաբերող շնորհներ		421(դեռևս եկամուտ չճանաչված մնացորդի մասով)
2.10	Այլ պարտավորություններ, այդ թվում`		415,516,517, 518, 542
		Այս և հաջորդ տողում ցույց են տրվում 2.10 տողում ներառված այլ պարտավորությունների այն հոդվածների անվանումները և գումարները, որոնք իրենց բնույթով (գործառույթով) կամ գումարով առավել էական են տվյալ կազմակերպության համար կամ որոնց առանձին բացահայտումը պահանջվում է հաշվապահական հաշվառման ստանդարտներով:	
3.1	Կանոնադրական կապիտալ		311, 312, 313
3.2	Էմիսիոն եկամուտ		314
3.3	Գլխավոր պահուստ		351,344 (այն չափով, որքանով ակնկալվում է որ հայտարարված միջանկյալ շահաբաժինները (արտոնյալ բաժնետոմսերի գծով) կմարվեն պահուստային կապիտալի հաշվին)
3.4	Վերագնահատման պահուստներ		321,322,323
3.5	Չբաշխված շահույթ		342,343,344 (այն չափով, որքանով ակնկալվում է, որ հայտարարված միջանկյալ շահաբաժինները կմարվեն չբաշխված շահույթի հաշվին)
3.6	Սեփական կապիտալի այլ տարրեր	"Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքներ" հաշվի մնացորդը),	352, ինչպես նաև հաշվեկշռի "Սեփական կապիտալ" բաժնի մյուս հոդվածներում չներառված սեփական կապիտալի տարրերի հաշվեկշռային արժեքը

Գլուխ 5. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՍԻՆ

19. Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը կարող է ներկայացվել երկու ձևով: Վճարահաշվարկային կազմակերպությունները եկամուտներն ու ծախսերը կարող են ներկայացնել մեկ՝ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության ձևով (հավելված 2), կամ երկու հաշվետվությունների միջոցով՝ ներկայացնելով ֆինանսական արդյունքների մասին և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություններ (հավելված 2.1): Մեկ հաշվետվության ներկայացման դեպքում, եկամտի և ծախսերի բոլոր տարրերը ներկայացվում են միասին: Երկու հաշվետվություններով ներկայացնելու դեպքում առաջին հաշվետվությունը՝ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, արտացոլում է որպես շահույթ/վնաս ճանաչված եկամուտները և ծախսերը, իսկ երկրորդ հաշվետվությունը՝ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, սկսվում է շահույթից/վնասից և ի լրումն ներառում է եկամտի և ծախսերի տարրեր, որոնք ՖՀՄՍ-ներով պահանջվում կամ թույլատրվում է ճանաչել շահույթից/վնասից դուրս: Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը չի ներառում սեփականատերերի հետ կապված գործառնությունների տարրեր, որոնք արտացոլվում են սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունում:

20. Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության 3-րդ և 4-րդ սյունակներում լրացվում են համապատասխանաբար հաշվետու և նախորդ տարվա (ժամանակաշրջանի) տվյալները:

21. Ստորև բերված աղյուսակում ներկայացված են հաշվետվության և դրան համապատասխան կից ծանոթագրությունների հոդվածներում ներառվող հաշվապահական հաշվառման հաշվային պլանի հաշիվները:

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Կից ծանոթագրություններ	Հաշվապահական հաշվառման հաշվային պլանի հաշիվներ
1	2	3
Գործառնությունների գծով ստացված եկամուտներ		611, 612
Գործառնությունների գծով կատարված ծախսեր		711
Համախառն շահույթ (վնաս)	Գործառնությունների իրացումից համախառն շահույթը (վնասը)՝ տող 010+ տող 020	
Իրացման ծախսեր		712
Վարչական ծախսեր		713
Գործառնությունների գծով շահույթ (վնաս)	Գործառնություններից շահույթը (վնասը)՝ տող 030+ տող 040+ տող 050	
Գործառնական այլ եկամուտներ, այդ թվում՝		614
Գործառնական այլ ծախսեր, այդ		714

թվում`		
	Այս և հաջորդ տողում ցույց են տրվում գործառնական ծախսերի այն հոդվածների անվանումները և գումարները, որոնք իրենց բնույթով (գործառույթով) կամ գումարով առավել էական են տվյալ կազմակերպության համար կամ որոնց առանձին բացահայտումը պահանջվում է հաշվապահական հաշվառման ստանդարտներով:	
Գործառնական շահույթ (վնաս)	Կազմակերպության գործառնական գործունեության շահույթ կամ վնաս` տող 060+070+080	
Ֆինանսական ծախսեր	Ստացված վարկերի ու փոխառությունների, ինչպես նաև ֆինանսական վարձակալության գծով տոկոսային ծախսերը	
Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումների գծով շահույթ (վնաս)	Կապակցված կազմակերպությունների շահույթի (վնասի) բաժնեմասը` ներդրումները ինքնարժեքի մեթոդով հաշվառելիս	
Ընդհատված գործառնությանը վերագրելի ակտիվների վաճառքներից և պարտավորությունների մարումներից շահույթ (վնաս)	Ընդհատված գործառնությանը վերագրելի ակտիվների վաճառքներից և պարտավորությունների մարումներից եկամուտների և ծախսերի տարբերությունը	
Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս), այդ թվում`		621, 622, 624, 625, 626, 627, 628, 629, 721, 722, 724, 725, 726, 728, 729
	Այս և հաջորդ տողում ցույց են տրվում ոչ գործառնական եկամուտների կամ ծախսերի այն հոդվածի անվանումը և գումարը, որն իր բնույթով (գործառույթով) կամ գումարով առավել էական է տվյալ կազմակերպության համար կամ որի առանձին բացահայտումը պահանջվում է հաշվապահական հաշվառման ստանդարտներով	
Չուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը	Հաշվետու ժամանակաշրջանի զուտ շահույթը (վնասը) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը կամ շահութահարկի գծով եկամտի (փոխհատուցման) ավելացումը` տող 090+ տող100 + տող110+ տող120+ տող130	
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	Շահութահարկի գծով ծախսը (եկամուտը (փոխհատուցումը)), որը	751

	կազմված է ընթացիկ հարկի գծով ծախսից և հետաձգված հարկի գծով ծախսից (եկամտից (փոխհատուցումից)) Եթե առաջանում է շահութահարկի գծով ծախս, սույն հոդվածի գումարը ցույց է տրվում փակագծերում, փոխհատուցման դեպքում՝ առանց փակագծերի	
Չուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	Հաշվետու ժամանակաշրջանի գուտ շահույթը (վնասը)՝ հաշվի առած նաև շահութահարկի գծով ծախսը (եկամուտը)՝ տող140+ տող150	
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք , այդ թվում՝	Արտարժույթային գործառնություններից փոխարժեքային տարբերությունները, վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներից օգուտը (վնասը), դրամական միջոցների հոսքերի հեջավորումը, սեփականության վերագնահատումից օգուտը (վնասը), ինքնարժեքի մեթոդով հաշվառվող նեղումների գծով համապարփակ ֆինանսական արդյունք և այլն	
	Այս և հաջորդ տողում ցույց են տրվում այլ համապարփակ ֆինանսական արդյունքների այն հոդվածի անվանումը և գումարը, որն իր բնույթով (գործառնությամբ) կամ գումարով առավել էական է տվյալ կազմակերպության համար կամ որի առանձին բացահայտումը պահանջվում է հաշվապահական հաշվառման ստանդարտներով	
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի տարրերի գծով շահութահարկի ծախս (փոխհատուցում)	Համապարփակ ֆինանսական արդյունքների տարրերի գծով շահութահարկի ծախսը (եկամուտը (փոխհատուցումը)), որը կազմված է ընթացիկ հարկի գծով ծախսից և հետաձգված հարկի գծով ծախսից (եկամտից (փոխհատուցումից))	
Չուտ այլ համապարփակ ֆինանսական արդյունք շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	Հաշվետու ժամանակաշրջանի գուտ այլ համապարփակ ֆինանսական արդյունքը՝ հաշվի առած նաև շահութահարկի գծով ծախսը (եկամուտը)՝ տող170+ տող180	
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք	"Չուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո" և "Այլ համապարփակ ֆինանսական արդյունք շահութահարկի գծով	

	ծախսի նվազեցումից հետո" հողվածների հանրագումարը	
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ (վնաս)	Սույն և հաջորդ տողի լրացումը պարտադիր է այն բաժնետիրական ընկերությունների համար, որոնց սովորական բաժնետոմսերը կամ պոտենցիալ սովորական բաժնետոմսերը հրապարակայնորեն վաճառվում են, կամ որոնք գտնվում են արժեթղթերի բաց (կանոնակարգվող) շուկայում սովորական բաժնետոմսեր կամ պոտենցիալ սովորական բաժնետոմսեր թողարկելու գործընթացում: Սույն հողվածների գումարը ցույց է տրվում դրամներով (ոչ թե հազար դրամներով): Նշված պայմաններին չբավարարող բաժնետիրական ընկերությունները այս տողերը լրացնում են իրենց հայեցողությամբ:	
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նոսրացված շահույթ (վնաս)		

Գլուխ 6. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

22. Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը բաղկացած է երկու բաժիններից: I բաժնում ցույց են տրվում նախորդ տարվա տվյալները, իսկ II բաժնում՝ հաշվետու տարվա տվյալները:

23. Սույն կարգում հաշվետու տարի (ժամանակաշրջան) է՝ I բաժնի համար նախորդ տարին (ժամանակաշրջանը), իսկ II բաժնի համար՝ հաշվետու տարին (ժամանակաշրջանը):

24. Հաշվետվության 010-090 տողերում ցույց են տրվում.

1) 010 տողում ցույց են տրվում նախորդ տարվա հունվարի 1-ի դրությամբ.

ա. 3-րդ սյունակում՝ 311 "Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ" հաշվի մնացորդը,

բ. 4-րդ սյունակում՝ 313 "Հետ գնված կապիտալ" հաշվի մնացորդը,

գ. 5-րդ սյունակում՝ կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի գուտ գումարը (սյունակ 3 - սյունակ 4),

դ. 6-րդ սյունակում՝ 314 "Էմիսիոն եկամուտ" հաշվի մնացորդը: Էմիսիոն վնասը ցույց է տրվում փակագծերում,

ե. 7-րդ սյունակում՝ 321 "Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճ" հաշվի մնացորդը,

զ. 8-րդ սյունակում՝ 322 "Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված շահույթներ և վնասներ", 323 "Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից շահույթներ և վնասներ" հաշիվների կրեդիտային և դեբետային մնացորդների տարբերությունը: Բացասական լինելու դեպքում այս գումարը ցույց է տրվում փակագծերում,

է. 9-րդ սյունակում՝ գլխավոր պահուստը՝ 351 "Պահուստային կապիտալ" հաշվի մնացորդը,

ը. 10-րդ սյունակում՝ չբաշխված շահույթի (վնասի) գումարը (342 "Նախորդ տարիների չբաշխված շահույթ (չծածկված վնաս)" և 343 "Հաշվետու տարվա զուտ շահույթ (վնաս)" հաշիվների մնացորդների հանրագումարը): Վնասը ցույց է տրվում փակագծերում,

թ. 11-րդ սյունակում՝ 344 "Միջանկյալ շահաբաժիններ" հաշվի մնացորդը,

ժ. 12-րդ սյունակում՝ 352 "Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքներ" հաշվի, ինչպես նաև սույն հաշվետվությունում չներառված սեփական կապիտալի այլ տարրերի մնացորդների մեծությունը: Բացասական լինելու (դեբետային մնացորդի առկայության) դեպքում այս գումարը ցույց է տրվում փակագծերում,

ժա. 13-րդ սյունակում՝ ընդամենը մնացորդը (սյունակ 5 + սյունակ 6 + սյունակ 7 + սյունակ 8 + սյունակ 9 + սյունակ 10 - սյունակ 11 + սյունակ 12):

2) 020 տողի 10-րդ սյունակում ցույց է տրվում ՀՀՄՍ 8-ի «Հաշվետու ժամանակաշրջանի զուտ շահույթ կամ վնաս, Էական սխալներ և փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ» ստանդարտի հիմնական մոտեցման համաձայն հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխության և հաշվետու տարում (ժամանակաշրջանում) հայտնաբերված նախորդ տարիներին վերաբերող էական սխալների ուղղման հետևանքով չբաշխված շահույթի (չծածկված վնասի) սկզբնական մնացորդի ճշգրտման գումարը (341 "Ֆինանսական արդյունքների ճշգրտում" հաշվի կրեդիտային և դեբետային շրջանառությունների տարբերությունը): Բացասական լինելու դեպքում այս գումարը ցույց է տրվում փակագծերում: Նույն գումարը ցույց է տրվում նաև 13-րդ սյունակում:

3) 030 տողի 10-րդ սյունակում ցույց է տրվում 010 և 020 տողերի հանրագումարը: Նույն գումարը ցույց է տրվում նաև 13-րդ սյունակում: 030 տողի մնացած սյունակներում ցույց են տրվում 010 տողի համապատասխան սյունակների գումարները:

4) 040 տողում ցույց է տրվում.

ա. 7-րդ սյունակում ցույց է տրվում ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների՝ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության այլ համապարփակ ֆինանսական արդյունք հոդվածում արտացոլված (ձև 2-ի տող 170 և ձև 2.2-ի տող 020) վերագնահատումից տարբերությունների փոփոխությունը (աճը կամ նվազումը) (321 "Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճ" հաշվի կրեդիտային և դեբետային շրջանառությունների տարբերությունը (ակտիվները հաշվառող համապատասխան հաշիվների հետ թղթակցող մասով, այսինքն՝ բացառությամբ 321 "Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճ" հաշվի դեբետի և 342 "Նախորդ տարիների չբաշխված շահույթ (չծածկված վնաս)" հաշվի կրեդիտի թղթակցության գումարի)): Բացասական լինելու դեպքում այս գումարը ցույց է տրվում փակագծերում,

բ. 8-րդ սյունակում՝ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների և հեջավորման գործիքների՝ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության այլ համապարփակ ֆինանսական արդյունք հոդվածում արտացոլված (ձև 2-ի տող 170 և ձև 2.2-ի տող 020) իրական արժեքով վերաչափումից տարբերությունների փոփոխությունը (աճը կամ նվազումը) (322 "Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված շահույթներ և վնասներ", 323 "Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից շահույթներ և վնասներ" հաշիվների կրեդիտային և դեբետային շրջանառությունների տարբերությունը (վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները և հեջավորման գործիքները հաշվառող համապատասխան հաշիվների հետ թղթակցող մասով, այսինքն՝ բացառությամբ հեջավորված հոդվածները

հաշվառող համապատասխան հաշիվների, 626 "Ոչ գործառնական ֆինանսական գործիքների վերաչափումից և արժեզրկման (անհավաքագրելիության) հակադարձումից եկամուտներ", 726 "Ոչ գործառնական ֆինանսական գործիքների վերաչափումից և արժեզրկումից (անհավաքագրելիությունից) ծախսեր" հաշիվների հետ թղթակցության գումարի)): Բացասական լինելու դեպքում այս գումարը ցույց է տրվում փակագծերում:

գ. 12-րդ սյունակում՝ սեփական կապիտալի այլ տարրերում ներառված եկամուտների և ծախսերի տարբերությունը: Բացասական լինելու (զուտ դեբետային շրջանառության առկայության) դեպքում այս գումարը ցույց է տրվում փակագծերում,

դ. 13-րդ սյունակում՝ 7-րդ, 8-րդ և 12-րդ սյունակների հանրագումարը:

5) 050 տողում ցույց է տրվում.

ա. 3-րդ սյունակում՝ կանոնադրական կապիտալի ձևավորման, բաժնետոմսերի (բաժնենմասերի) հետագա թողարկման հետևանքով ու կանոնադրական կապիտալի այլ աճի (սեփական կապիտալի այլ տարրերի հաշվին) և չվճարված կամ հետ գնված բաժնետոմսերի (բաժնենմասերի) մարման հետևանքով ու կանոնադրական կապիտալի այլ նվազման (սեփական կապիտալի այլ տարրերին հատկացումների հետևանքով) տարբերությունը (311 "Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ" հաշվի կրեդիտային և դեբետային շրջանառությունների տարբերությունը): Բացասական լինելու դեպքում այս գումարը ցույց է տրվում փակագծերում,

բ. 4-րդ սյունակում՝ բաժնետոմսերի (բաժնենմասերի) հետ գնման հետևանքով ու հետ գնված կապիտալի այլ աճի և հետ գնված բաժնետոմսերի (բաժնենմասերի) վաճառքի, մարման հետևանքով ու հետ գնված կապիտալի այլ նվազման տարբերությունը (313 "Հետ գնված կապիտալ" հաշվի դեբետային և կրեդիտային շրջանառությունների տարբերությունը): Բացասական լինելու դեպքում այս գումարը ցույց է տրվում փակագծերում,

գ. 5-րդ սյունակում՝ 3-րդ սյունակի և 4-րդ սյունակների հանրագումարի տարբերությունը: Բացասական լինելու դեպքում այս գումարը ցույց է տրվում փակագծերում,

դ. 6-րդ սյունակում՝ կանոնադրական կապիտալի ձևավորման, բաժնետոմսերի (բաժնենմասերի) հետագա թողարկման, հետ գնված բաժնետոմսերի վաճառքի, մարման, էմիսիոն վնասի ծածկման նպատակով կանոնադրական կապիտալից կատարված հատկացումների, էմիսիոն եկամտի հաշվին կանոնադրական կապիտալի աճի հետևանքով էմիսիոն եկամտի փոփոխության (աճի և նվազման տարբերության) գումարը (314 "Էմիսիոն եկամուտ" հաշվի կրեդիտային և դեբետային շրջանառությունների տարբերությունը (311 "Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ", 312 "Չվճարված կապիտալ", 313 "Հետ գնված կապիտալ", ինչպես նաև ակտիվները (պարտավորությունները) հաշվառող համապատասխան հաշիվների հետ թղթակցող մասով)):

Բացասական լինելու դեպքում այս գումարը ցույց է տրվում փակագծերում,

ե. 9-րդ սյունակում՝ գլխավոր պահուստի հաշվին կանոնադրական կապիտալի աճի և բանկի սեփականատերերի հետ այլ գործարքների հետևանքով գլխավոր պահուստի աճի և նվազման տարբերության գումարը, պահուստային կապիտալի աճի նպատակով կանոնադրական կապիտալից կատարված հատկացումների, գլխավոր պահուստի հաշվին կանոնադրական կապիտալի աճի և բաժնետերերի (սեփականատերերի) հետ այլ գործարքների հետևանքով գլխավոր պահուստի փոփոխության (աճի և նվազման տարբերության) գումարը (351 "Պահուստային կապիտալ" հաշվի կրեդիտային և դեբետային շրջանառությունների տարբերությունը (311 "Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ", 312 "Չվճարված կապիտալ" հաշիվների հետ թղթակցող մասով)):

Բացասական լինելու դեպքում այս գումարը ցույց է տրվում փակագծերում,

գ. 10-րդ սյունակում՝ կուտակված վնասների ծածկման նպատակով կանոնադրական կապիտալից կատարված հատկացումների, չբաշխված շահույթի հաշվին կանոնադրական կապիտալի աճի և բաժնետերերի (սեփականատերերի) հետ այլ գործարքների հետևանքով չբաշխված շահույթի փոփոխության (աճի և նվազման տարբերության) գումարը (342 "Նախորդ տարիների չբաշխված շահույթ (չծածկված վնաս)" հաշվի կրեդիտային և դեբետային շրջանառությունների տարբերությունը (311 "Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ", 312 "Չվճարված կապիտալ" հաշիվների հետ թղթակցող մասով)): Բացասական լինելու դեպքում այս գումարը ցույց է տրվում փակագծերում,

է. 12-րդ սյունակում՝ բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքների հետևանքով սեփական կապիտալի այլ տարրերի փոփոխության գումարը,

ը. 13-րդ սյունակում՝ 5-րդ, 6-րդ, 9-րդ, 10-րդ, և 12-րդ սյունակների հանրագումարը:

6) 051 և 052 տողերի համապատասխան սյունակներում լրացվում են 050 տողում ներառված այն հոդվածների անվանումները և գումարները, որոնք իրենց բնույթով (գործառույթով) կամ գումարով առավել էական են տվյալ կազմակերպության համար կամ որոնց առանձին բացահայտումը պահանջվում է հաշվապահական հաշվառման ստանդարտներով:

7) 060 տողում ցույց է տրվում.

ա. 9-րդ սյունակում՝ շահաբաժինների (արտոնյալ բաժնետոմսերի գծով) հայտարարման հետևանքով գլխավոր պահուստի նվազման գումարը (351 "Պահուստային կապիտալ" հաշվի դեբետի և 529 "Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր մասնակիցներին (հիմնադիրներին)" հաշվի կրեդիտի թղթակցության գումարը),

բ. 10-րդ սյունակում՝ շահաբաժինների հայտարարման հետևանքով չբաշխված շահույթի նվազման գումարը (342 "Նախորդ տարիների չբաշխված շահույթ (չծածկված վնաս)" հաշվի դեբետի և 529 "Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր մասնակիցներին (հիմնադիրներին)" հաշվի կրեդիտի թղթակցության գումարը),

գ. 11-րդ սյունակում՝ հայտարարված և մարված (դուրս գրված) միջանկյալ շահաբաժինների տարբերությունը (344 "Միջանկյալ շահաբաժիններ" հաշվի դեբետային և կրեդիտային շրջանառությունների տարբերությունը): Բացասական լինելու դեպքում այս գումարը ցույց է տրվում փակագծերում,

դ. 13-րդ սյունակում՝ 9-րդ ու 10-րդ սյունակների հանրագումարի և 11-րդ սյունակի տարբերությունը: Բացասական լինելու դեպքում այս գումարը ցույց է տրվում փակագծերում:

8) 070 տողի 8-րդ, 9-րդ և 12-րդ սյունակներում ցույց են տրվում սեփական կապիտալի տարրերի այլ ավելացումներն ու նվազեցումները, 13-րդ սյունակում՝ դրանց հանրագումարը:

9) 071 տողի համապատասխան սյունակներում լրացվում են 070 տողում ներառված այն հոդվածի անվանումը և գումարները, որը իր բնույթով (գործառույթով) կամ գումարով առավել էական է տվյալ կազմակերպության համար կամ որի առանձին բացահայտումը պահանջվում է հաշվապահական հաշվառման ստանդարտներով:

10) 080 տողում ցույց է տրվում.

ա. 6-րդ սյունակում՝ չբաշխված շահույթի, գլխավոր պահուստի հաշվին էմիսիոն վնասի ծածկման հետևանքով էմիսիոն վնասի նվազման գումարը (314 "Էմիսիոն եկամուտ" հաշվի կրեդիտի և 342 "Նախորդ տարիների չբաշխված շահույթ (չծածկված վնաս)", 351 "Պահուստային կապիտալ" հաշիվների դեբետի թղթակցության գումարը), ինչպես նաև սեփական կապիտալի այլ տարրերի հաշվին էմիսիոն վնասի ծածկման գումարը,

բ. 7-րդ սյունակում՝ ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճի՝ չբաշխված շահույթին վերագրման հետևանքով վերագնահատումից արժեքի աճի նվազման գումարը (321 "Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճ" հաշվի դեբետի և 342 "Նախորդ տարիների չբաշխված շահույթ (չծածկված վնաս)" կրեդիտի թղթակցության գումարը),

գ. 9-րդ սյունակում՝ չբաշխված շահույթի հաշվին գլխավոր պահուստի աճի և էմիսիոն վնասի ու կուտակված վնասների ծածկման նպատակով կատարված հատկացումների հետևանքով պահուստային կապիտալի նվազման տարբերությունը (351 "Պահուստային կապիտալ" հաշվի և 342 "Նախորդ տարիների չբաշխված շահույթ (չծածկված վնաս)", 314 "Էմիսիոն եկամուտ" հաշիվների թղթակցության գումարը): Բացասական լինելու դեպքում այս գումարը ցույց է տրվում փակագծերում,

դ. 10-րդ սյունակում՝ ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճի՝ չբաշխված շահույթին վերագրման, գլխավոր պահուստի հաշվին կուտակված վնասների ծածկման հետևանքով չբաշխված շահույթի աճի (կուտակված վնասների նվազման) և էմիսիոն վնասների ծածկման, գլխավոր պահուստի աճի նպատակով կատարված հատկացումների հետևանքով չբաշխված շահույթի նվազման տարբերությունը (342 "Նախորդ տարիների չբաշխված շահույթ (չծածկված վնաս)" հաշվի և 314 "Էմիսիոն եկամուտ", 351 "Պահուստային կապիտալ" հաշիվների թղթակցության գումարը), ինչպես նաև սեփական կապիտալի այլ տարրերի հետ թղթակցության գումարը): Բացասական լինելու դեպքում այս գումարը ցույց է տրվում փակագծերում,

ե. 12-րդ սյունակում՝ սեփական կապիտալի այլ տարրերի ներքին շարժի գումարը,

զ. 13-րդ սյունակում՝ 6-րդ, 7-րդ, 9-րդ, 10-րդ և 12-րդ սյունակների հանրագումարը:

11) 081 տողի համապատասխան սյունակներում լրացվում է 080 տողում ներառված այն հոդվածի անվանումը և գումարները, որն իր բնույթով (գործառույթով) կամ գումարով առավել էական է տվյալ կազմակերպության համար կամ որի առանձին բացահայտումը պահանջվում է հաշվապահական հաշվառման ստանդարտներով:

12) 090 տողում ցույց է տրվում հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջի դրությամբ՝

ա. 3-րդ սյունակում՝ 311 "Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ" հաշվի մնացորդը,

բ. 4-րդ սյունակում՝ 313 "Հետ գնված կապիտալ" հաշվի մնացորդը,

գ. 5-րդ սյունակում՝ կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի գուտ գումարը (սյունակ 3 - սյունակ 4),

դ. 6-րդ սյունակում՝ 314 "Էմիսիոն եկամուտ" հաշվի մնացորդը: Էմիսիոն վնասը ցույց է տրվում փակագծերում,

ե. 7-րդ սյունակում՝ 321 "Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճ" հաշվի մնացորդը,

զ. 8-րդ սյունակում՝ 322 "Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված շահույթներ և վնասներ", 323 "Հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից շահույթներ և վնասներ" հաշիվների մնացորդների հանրագումարը: Վնասը ցույց է տրվում փակագծերում,

է. 9-րդ սյունակում՝ գլխավոր պահուստը՝ 351 "Պահուստային կապիտալ" հաշվի մնացորդը,

ը. 10-րդ սյունակում՝ չբաշխված շահույթի (վնասի) գումարը (342 "Նախորդ տարիների չբաշխված շահույթ (չծածկված վնաս)" և 343 "Հաշվետու տարվա գուտ

շահույթ (վնաս)" հաշիվների մնացորդների հանրագումարը): Վնասը ցույց է տրվում փակագծերում,

թ. 11-րդ սյունակում՝ 344 "Միջանկյալ շահաբաժիններ" հաշվի մնացորդը,

ժ. 12-րդ սյունակում՝ 352 "Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքներ" հաշվի, ինչպես նաև սույն հաշվետվությունում չներառված սեփական կապիտալի այլ տարրերի մնացորդների մեծությունը: Բացասական լինելու (դեբետային մնացորդի առկայության) դեպքում այս գումարը ցույց է տրվում փակագծերում:

ժա. 13-րդ սյունակում՝ ընդամենը մնացորդը (սյունակ 5 + սյունակ 6 + սյունակ 7 + սյունակ 8 + սյունակ 9 + սյունակ 10 - սյունակ 11 + սյունակ 12):

Գլուխ 7. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ

25. Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում արտացոլվում է հաշվետու տարում (ժամանակաշրջանում) կազմակերպության դրամարկղում և բանկային հաշիվներում գործառնական, ներդրումային, ֆինանսական գործունեությունից Հայաստանի Հանրապետության արժույթի և արտարժույթի, դրամական միջոցների համարժեքների (այսուհետ՝ դրամական միջոցներ) մուտքերը և ելքերը, հաշվետու տարվա սկզբի և հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջի մնացորդները, ինչպես նաև արտարժույթի փոխարժեքային տարբերությունների հետևանքով դրամական միջոցների և դրամական միջոցների համարժեքների աճը կամ նվազումը (251 "Դրամարկղ", 252 "Հաշվարկային հաշիվ", 253 "Արտարժույթային հաշիվ", 254 "Այլ հաշիվներ բանկերում", 257 "Դրամական միջոցների համարժեքներ" հաշիվների դեբետային և կրեդիտային շրջանառությունները, հաշվետու տարվա սկզբի և հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջի մնացորդները):

26. "Հաշվետու տարի (ժամանակաշրջան)" արտահայտությունը հավասարապես վերաբերում է հաշվետվության ինչպես հաշվետու տարվան (ժամանակաշրջանին), այնպես էլ նախորդ տարվան (ժամանակաշրջանին):

27. Արտարժույթով դրամական միջոցները, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամական միջոցների համարժեքները հաշվետվությունում արտացոլվում են Հայաստանի Հանրապետության արժույթով: Ընդ որում, հաշվետու տարվա սկզբի մնացորդները ցույց են տրվում նախորդ տարվա դեկտեմբերի 31-ի՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքով: Տարվա ընթացքում արտարժույթով դրամական միջոցների հոսքերը ցույց են տրվում տվյալ օրվա Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքով: Արտարժույթով դրամական միջոցների, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամական միջոցների համարժեքների տարեվերջի (հաշվետու ժամանակաշրջանի վերջի) մնացորդները ցույց են տրվում հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին օրվա՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքով:

28. Հաշվետվության հողվածներում դրամական միջոցների հոսքերը ներառում են այդ հողվածներին վերաբերող տրված կամ ստացված կանխավճարները:

29. "Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը" հողվածում (տող 010) ցույց է տրվում դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը:

30. "Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից" հողվածում (տող 020) ցույց է տրվում վճարահաշվարկային

ծառայությունների դիմաց ստացված միջնորդավճարների, տարբեր վճարների, ապրանքների վաճառքի, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման դիմաց ստացված դրամական միջոցների գումարը:

31. "Գործառնական այլ գործունեությունից" հողվածում (տող 030) ցույց է տրվում հումքի, նյութերի, արագամաշ առարկաների և պաշարների այլ տեսակների իրացումից, վարձավճարներից, ռոյալթիներից, դրամական միջոցների համարժեքներ հանդիսացող ներդրումներից ստացված տոկոսներից, տույժերից, տուգանքներից, դուրս գրված դեբիտորական պարտքերի մարումից, նյութական վնասի փոխհատուցումից, անհատույց ստացված դրամական միջոցների գումարը, ինչպես նաև գործառնական այլ գործունեությունից ստացված դրամական միջոցների գումարը:

32. 031 տողում լրացվում է 030 տողում ներառված գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտք հանդիսացող այն հողվածի անվանումը և գումարները, որը իր բնույթով (գործառույթով) կամ գումարով առավել էական է տվյալ կազմակերպության համար կամ որի առանձին բացահայտումը պահանջվում է հաշվապահական հաշվառման ստանդարտներով:

33. "Ընդամենը գործառնական գործունեությունից մուտքեր" հողվածում (տող 040) ցույց է տրվում գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցների հանրագումարը (տող 020 + տող 030):

34. "Նյութերի, ապրանքների ձեռք բերման գծով" հողվածում (տող 050) ցույց է տրվում կազմակերպության գործառնական գործունեության իրականացման նպատակով նյութերի, ապրանքների, արագամաշ առարկաների ձեռքբերման դիմաց մատակարարներին վճարված դրամական միջոցների գումարը:

35. "Աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գծով" հողվածում (տող 060) ցույց է տրվում կազմակերպության գործառնական գործունեության նպատակով աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման դիմաց կապալառուներին վճարված դրամական միջոցների գումարը:

36. "Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից" հողվածում (տող 070) ցույց են տրվում կազմակերպության գործառնական գործունեության իրականացման նպատակով աշխատակիցներին դրամական միջոցներով վճարված աշխատավարձը (դրան հավասարեցված վճարումները), ինչպես նաև նրանց անունից կատարված դրամական միջոցների վճարումները (օրինակ՝ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ, եկամտահարկ, ալիմենտ), բացի այլ հողվածներում ներառվածներից (օրինակ՝ հիմնական միջոցների կառուցման համար վճարված):

37. "Վճարումներ բյուջե" հողվածում (տող 080) ցույց է տրվում կազմակերպության կողմից հարկերի (բացի եկամտահարկից), տուրքերի, դրանց դիմաց հաշվարկված տույժերի, տուգանքների և բյուջե գանձվող այլ վճարների գծով վճարված դրամական միջոցների գումարը:

38. "Վճարումներ սոցիալական ապահովագրության հիմնադրամ" հողվածում (տող 090) ցույց է տրվում գործառնական գործունեությունում զբաղված աշխատողների պարտադիր սոցիալական ապահովագրության նպատակով վճարված դրամական միջոցների գումարը, ներառյալ դրանց գծով վճարված տույժերն ու տուգանքները (բացի աշխատակիցների անունից վճարվածների):

39. "Գործառնական այլ գործունեության նպատակով" հողվածում (տող 100) ցույց է տրվում անհատույց տրված, գործուղման, պայմանագրային պարտավորությունների խախտման համար տույժերի և տուգանքների, ինչպես նաև գործառնական այլ գործունեության նպատակով վճարված դրամական միջոցների գումարը:

40. 101 տողում լրացվում է 100 տողում ներառված գործառնական գործունեությունից դրամական միջոցների ելք հանդիսացող այն հողվածի

անվանումը և գումարները, որն իր բնույթով (գործառույթով) կամ գումարով առավել էական է տվյալ կազմակերպության համար կամ որի առանձին բացահայտումը պահանջվում է հաշվապահական հաշվառման ստանդարտներով:

41. "Ընդամենը գործառնական գործունեությունից ելքեր" հոդվածում (տող 110) ցույց է տրվում գործառնական գործունեության հետ կապված դրամական միջոցների ելքերի հանրագումարը (տող 050 + տող 060 + տող 070 + տող 080 + տող 090 + տող 100):

42. "Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր" հոդվածում (տող 120) ցույց է տրվում գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքերի և ելքերի տարբերությունը (տող 040 - տող 110): Բացասական լինելու դեպքում սույն հոդվածի գումարը ցույց է տրվում փակագծերում:

43. "Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների վաճառքներից" հոդվածում (տող 130) ցույց է տրվում ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների վաճառքներից ստացված դրամական միջոցների գումարը:

44. "Ֆինանսական ակտիվներով գործառնություններից" հոդվածում (տող 140) ցույց է տրվում այլ վճարահաշվարկային կազմակերպությունների սեփական կապիտալի գործիքների (բաժնետոմսեր, բաժնեմասեր, փայեր), այլ կազմակերպությունների պարտքային արժեթղթերի (պարտատոմսեր, մուրհակներ) վաճառքներից, այլ կազմակերպությունների պարտքային արժեթղթերի, այլ կազմակերպություններին տրամադրված փոխառությունների մարումից, ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքի մարումից ստացված դրամական միջոցների գումարը (այն գործիքները, որոնք համարվում են դրամական միջոցների համարժեքներ կամ որոնք պահվում են դիլերային կամ առևտրային նպատակներով, սույն հոդվածում չեն ներառվում):

45. "Շահաբաժինների և տոկոսների ստացումից" հոդվածում (տող 150) ցույց է տրվում շահաբաժինների և տոկոսների (ներառյալ՝ ֆինանսական վարձակալության գծով ստացվածները) ձևով ստացված դրամական միջոցների գումարը (բացառությամբ դրամական միջոցների համարժեքներ հանդիսացող ներդրումներից ստացված տոկոսների):

46. "Ներդրումային այլ գործունեությունից մուտքեր" հոդվածում (տող 160) ցույց է տրվում ֆյուչերսային, ֆորվարդային, օպցիոն, սվոպ պայմանագրերից (որոնք չեն կնքվել դիլերային կամ առևտրային նպատակներով կամ որոնցից մուտքերը չեն դասակարգվել որպես մուտքեր ֆինանսական գործունեությունից), ինչպես նաև ներդրումային այլ գործունեությունից ստացված դրամական միջոցների գումարը:

47. 161 տողում լրացվում է 160 տողում ներառված ներդրումային գործունեությունից դրամական միջոցների մուտք հանդիսացող այն հոդվածի անվանումը և գումարները, որն իր բնույթով (գործառույթով) կամ գումարով առավել էական է տվյալ կազմակերպության համար կամ որի առանձին բացահայտումը պահանջվում է հաշվապահական հաշվառման ստանդարտներով:

48. "Ընդամենը ներդրումային գործունեությունից մուտքեր" հոդվածում (տող 170) ցույց է տրվում ներդրումային գործունեությունից դրամական միջոցների մուտքերի հանրագումարը (տող 130 + տող 140 + տող 150 + տող 160):

49. "Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների ձեռքբերման գծով" հոդվածում (տող 180) ցույց է տրվում ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների ձեռք բերման կամ կառուցման համար վճարված դրամական միջոցների գումարը:

50. "Ֆինանսական ակտիվների ձեռքբերումից, փոխառությունների տրամադրումից" հոդվածում (տող 190) ցույց է տրվում այլ կազմակերպությունների սեփական կապիտալի գործիքների (բաժնետոմսեր, բաժնեմասեր, փայեր), այլ կազմակերպությունների պարտքային արժեթղթերի ձեռքբերման համար, այլ

կազմակերպություններին փոխառությունների տրամադրումից դրամական միջոցների ելքերի գումարը (այն գործիքները, որոնք համարվում են դրամական միջոցների համարժեքներ կամ որոնք պահվում են դիվերային կամ առևտրային նպատակներով, սույն հոդվածում չեն ներառվում):

51. "Ներդրումային այլ գործունեությունից ելքեր" հոդվածում (տող 200) ցույց է տրվում ֆյուչերսային, ֆորվարդային, օպցիոն, սվոպ պայմանագրերի դիմաց (որոնք չեն կնքվել դիվերային կամ առևտրային նպատակներով կամ որոնցից ելքերը չեն դասակարգվել որպես ելքեր ֆինանսական գործունեությունից), ինչպես նաև ներդրումային այլ գործունեության նպատակով վճարված դրամական միջոցների գումարը:

52. 201 տողում լրացվում է 200 տողում ներառված ներդրումային գործունեությունից դրամական միջոցների ելք հանդիսացող այն հոդվածի անվանումը և գումարները, որն իր բնույթով (գործառույթով) կամ գումարով առավել էական է տվյալ կազմակերպության համար կամ որի առանձին բացահայտումը պահանջվում է հաշվապահական հաշվառման ստանդարտներով:

53. "Ընդամենը ներդրումային գործունեությունից ելքեր" հոդվածում (տող 210) ցույց է տրվում ներդրումային գործունեությունից դրամական միջոցների ելքերի հանրագումարը (տող 180 + տող 190 + տող 200):

54. "Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների գուտ հոսքեր" հոդվածում (տող 220) ցույց է տրվում ներդրումային գործունեությունից դրամական միջոցների մուտքերի և ելքերի տարբերությունը (տող 170 - տող 210): Բացասական լինելու դեպքում սույն հոդվածի գումարը ցույց է տրվում փակագծերում:

55. "Սեփական կապիտալի գործիքների թողարկումից և վերավաճառքից" հոդվածում (տող 230) ցույց է տրվում կազմակերպության կողմից թողարկված (հետ գնված) սեփական կապիտալի գործիքների (բաժնետոմսեր, բաժնեմասեր, փայեր) վաճառքից (վերավաճառքից) ստացված դրամական միջոցների գումարը:

56. "Ստացված վարկերից և փոխառություններից" հոդվածում (տող 240) ցույց է տրվում այլ կազմակերպություններից ստացված վարկերից և փոխառություններից (ներառյալ՝ պարտքային արժեթղթերի թողարկումից) դրամական միջոցների մուտքերի գումարը:

57. "Ֆինանսական այլ գործունեությունից մուտքեր" հոդվածում (տող 250) ցույց է տրվում ֆյուչերսային, ֆորվարդային, օպցիոն, սվոպ պայմանագրերից (որոնցից մուտքերը դասակարգվել են որպես մուտքեր ֆինանսական գործունեությունից), ինչպես նաև ֆինանսական այլ գործունեությունից ստացված դրամական միջոցների գումարը:

58. 251 տողում լրացվում է 250 տողում ներառված ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների մուտք հանդիսացող այն հոդվածի անվանումը և գումարները, որն իր բնույթով (գործառույթով) կամ գումարով առավել էական է տվյալ կազմակերպության համար կամ որի առանձին բացահայտումը պահանջվում է հաշվապահական հաշվառման ստանդարտներով:

59. "Ընդամենը ֆինանսական գործունեությունից մուտքեր" հոդվածում (տող 260) ցույց է տրվում ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների մուտքերի հանրագումարը (տող 230 + տող 240 + տող 250):

60. "Ստացված վարկերի և փոխառությունների մարումից" հոդվածում (տող 270) ցույց է տրվում ստացված վարկերի և փոխառությունների, թողարկված պարտքային արժեթղթերի, ֆինանսական վարձակալության գծով կրեդիտորական պարտքի մարման համար վճարված դրամական միջոցների գումարը:

61. "Վճարված շահաբաժիններ և տոկոսներ" հոդվածում (տող 280) ցույց է տրվում կազմակերպության կողմից բաժնետերերին (մասնակիցներին, հիմնադիրներին) վճարված շահաբաժինների, ինչպես նաև ստացված վարկերի և փոխառությունների

գծով վճարված տոկոսները (ներառյալ՝ ֆինանսական վարձակալության գծով վճարվածները):

62. "Ֆինանսական այլ գործունեությունից ելքեր" հոդվածում (տող 290) ցույց է տրվում կազմակերպության կողմից թողարկված սեփական կապիտալի գործիքների (բաժնետոմսեր, բաժնեմասեր, փայեր) հետ գնման, ֆյուչերսային, ֆորվարդային, օպցիոն, սվոպ պայմանագրերի (որոնցից ելքերը դասակարգվել են որպես ելքեր ֆինանսական գործունեությունից) գծով, ինչպես նաև ֆինանսական այլ գործունեության նպատակով վճարված դրամական միջոցների գումարը:

63. 291 տողում ցույց է տրվում 290 տողում ներառված ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների ելք հանդիսացող այն հոդվածի անվանումը և գումարները, որն իր բնույթով (գործառույթով) կամ գումարով առավել էական է տվյալ կազմակերպության համար կամ որի առանձին բացահայտումը պահանջվում է հաշվապահական հաշվառման ստանդարտներով:

64. "Ընդամենը ֆինանսական գործունեությունից ելքեր" հոդվածում (տող 300) ցույց է տրվում ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների ելքերի հանրագումարը (տող 270 + տող 280 + տող 290):

65. "Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր" հոդվածում (տող 310) ցույց է տրվում ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների մուտքերի և ելքերի տարբերությունը (տող 260 - տող 300): Բացասական լինելու դեպքում սույն հոդվածի գումարը ցույց է տրվում փակագծերում:

66. "Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր գործառնական, ներդրումային և ֆինանսական գործունեություններից" հոդվածում (տող 320) ցույց է տրվում գործառնական, ներդրումային և ֆինանսական գործունեություններից դրամական միջոցների զուտ հոսքերի հանրագումարը (տող 120 + տող 220 + տող 310):

Բացասական լինելու դեպքում սույն հոդվածի գումարը ցույց է տրվում փակագծերում:

67. "Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ" հոդվածում (տող 330) ցույց է տրվում կազմակերպության դրամարկղում, բանկային հաշիվներում արտարժույթի, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամական միջոցների համարժեքների վերագնահատումից առաջացած փոխարժեքային զուտ տարբերությունները: Բացասական լինելու դեպքում սույն հոդվածի գումարը ցույց է տրվում փակագծերում: Սույն հոդվածում արտացոլված գումարները չեն հանդիսանում դրամական միջոցների հոսքեր:

68. "Ներքին շարժեր" հոդվածում (տող 340) ցույց է տրվում.

1) 4-րդ սյունակում՝ բանկից, արտարժույթի փոխանակումից, դրամական միջոցների համարժեքների վաճառքից կամ մարումից դրամարկղ մուտքագրված դրամի գումարի և բանկ հանձնման, արտարժույթի, դրամական միջոցների համարժեքների ձեռք բերման նպատակով դրամարկղից ելքագրված դրամի գումարի տարբերությունը:

Բացասական լինելու դեպքում սույն հոդվածի գումարը ցույց է տրվում փակագծերում,

2) 5-րդ սյունակում՝ արտարժույթի ձեռքբերումից, բանկի արտարժույթային հաշիվից, դրամական միջոցների համարժեքների վաճառքից կամ մարումից դրամարկղ մուտքագրված արտարժույթի գումարի և արտարժույթի փոխանակման, բանկի արտարժույթային հաշիվ հանձնման, դրամական միջոցների համարժեքների ձեռքբերման նպատակով դրամարկղից ելքագրված արտարժույթի գումարի տարբերությունը: Բացասական լինելու դեպքում սույն հոդվածի գումարը ցույց է տրվում փակագծերում,

3) 6-րդ սյունակում՝ դրամարկղից, արտարժույթի փոխանակումից, դրամական միջոցների համարժեքների վաճառքից կամ մարումից բանկային հաշիվներ մուտքագրված դրամի գումարի և դրամարկղ հանձնման, արտարժույթի, դրամական միջոցների համարժեքների ձեռքբերման նպատակով բանկային հաշիվներից ելքագրված դրամի գումարի տարբերությունը: Բացասական լինելու դեպքում սույն հոդվածի գումարը ցույց է տրվում փակագծերում,

4) 7-րդ սյունակում՝ արտարժույթի ձեռքբերումից, դրամարկղից, դրամական միջոցների համարժեքների վաճառքից կամ մարումից բանկային հաշիվներ մուտքագրված արտարժույթի գումարի և արտարժույթի փոխանակման, դրամարկղ հանձնման, դրամական միջոցների համարժեքների ձեռքբերման նպատակով բանկային հաշիվներից ելքագրված արտարժույթի գումարի տարբերությունը: Բացասական լինելու դեպքում սույն հոդվածի գումարը ցույց է տրվում փակագծերում,

5) 8-րդ սյունակում՝ դրամական միջոցների համարժեքների ձեռքբերման և դրանց վաճառքի կամ մարման տարբերությունը: Բացասական լինելու դեպքում սույն հոդվածի գումարը ցույց է տրվում փակագծերում:

Սույն հոդվածում արտացոլված գումարները չեն հանդիսանում դրամական միջոցների հոսքեր:

Գլուխ 8. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

69. Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում (այսուհետ՝ ծանոթագրություններ) ներկայացվում են.

1) Ֆինանսական հաշվետվություններին ներկայացման միջազգային ստանդարտներին համապատասխանության մասին հայտարարությունը.

2) Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը.

3) Այլ բացահայտումներ:

Ծանոթագրություններում բացահայտվող տեղեկատվությունը, ելնելով հասկանալիության սկզբունքից, ներկայացվում է տեքստի, աղյուսակի և այլ ձևերով, եթե դրանց ներկայացման համար ծանոթագրություններում աղյուսակներ նախատեսված չեն:

70. Ֆինանսական հաշվետվություններին ներկայացման միջազգային ստանդարտներին համապատասխանության մասին հայտարարություն: Ծանոթագրությունների այս բաժնում կազմակերպությունը նշում է, որ իր ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան:

Երբ տվյալ ստանդարտի հատուկ դրույթների համաձայն հաշվապահական հաշվառման ստանդարտը կիրառվում է մինչև դրա ուժի մեջ մտնելու ամսաթիվը, այդ փաստը պարտադիր պետք է բացահայտվի: Կազմակերպությունը, որի ֆինանսական հաշվետվությունները համապատասխանում են ՖՀՄՄ-ների պահանջներին, պետք է բացահայտ նշի այդ համապատասխանության մասին կից ծանոթագրություններում: Կազմակերպությունը չպետք է նկարագրի հաշվետվությունները ՖՀՄՄ-ներին համապատասխան, եթե դրանք չեն համապատասխանում ՖՀՄՄ-ների բոլոր պահանջներին:

71. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունն այն կոնկրետ սկզբունքներն են, հիմունքները, եղանակները, կանոնները, ձևերը և ընթացակարգերը, որոնք ընդունվում են կազմակերպության կողմից՝ հաշվապահական հաշվառումը վարելու և ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու և ներկայացնելու համար:

1) Հաշվապահական հաշվառման քաղաքականության մոտեցումները: 1-ին՝ "Հաշվապահական հաշվառման քաղաքականության մոտեցումները" աղյուսակում ցույց են տրվում.

ա. Պաշարների ինքնարժեքի որոշման բանաձևը՝ ԱՍԱԵ (ՖԻՖՈ) կամ միջին կշռված արժեք (եթե պաշարների տարբեր խմբերի համար կիրառվել են տարբեր բանաձևեր, ապա պետք է բացահայտվի յուրաքանչյուր խմբի համար կիրառված բանաձևը), ինչպես նաև բանաձևերի կիրառման հիմունքները,

բ. Հիմնական միջոցների հետագա չափման մոտեցումը՝ սկզբնական արժեք (հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումը) կամ վերագնահատված արժեք (եթե հիմնական միջոցների տարբեր դասերի համար ընտրվել են հետագա չափման տարբեր մոտեցումներ, ապա պետք է բացահայտվի յուրաքանչյուր դասի համար կիրառված մոտեցումը), ինչպես նաև, եթե ընտրվել է վերագնահատված արժեքով չափման մոտեցումը, վերագնահատված արժեքի որոշման պարբերականությունը և հիմունքը (անկախ գնահատում, փոխարինման (վերականգնման) արժեք և այլն),

գ. Ոչ նյութական ակտիվների հետագա չափման մոտեցումը՝ սկզբնական արժեք (հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումը) կամ վերագնահատված արժեք (եթե ոչ նյութական ակտիվների տարբեր դասերի համար ընտրվել են հետագա չափման տարբեր մոտեցումներ, ապա պետք է բացահայտվի յուրաքանչյուր դասի համար կիրառված մոտեցումը), ինչպես նաև, եթե ընտրվել է վերագնահատված արժեքով չափման մոտեցումը, վերագնահատված արժեքի որոշման պարբերականությունը,

դ. Ներդրումային գույքի հետագա չափման մոտեցումը՝ իրական արժեք կամ սկզբնական արժեք (հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումը),

ե. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից շահույթների և վնասների ճանաչման մոտեցումը՝ հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ եկամտի մասին հաշվետվությունում որպես եկամուտ կամ ծախս կամ վերջինիս միջոցով սեփական կապիտալում,

զ. Կապակցված կազմակերպություններում (դուստր ընկերություններում, ասոցիացված կազմակերպություններում և համատեղ վերահսկվող միավորներում) ներդրումների հաշվառման մոտեցումը՝ բաժնեմասնակցության մեթոդով, սկզբնական արժեքով կամ որպես վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվ,

է. Էական սխալների ուղղման և հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ազդեցության արտացոլման մոտեցումը՝ չբաշխված շահույթի սկզբնական մնացորդի ճշգրտում կամ հաշվետու ժամանակաշրջանի եկամուտներում կամ ծախսերում արտացոլում,

ը. Կառուցման և ծառայությունների մատուցման պայմանագրերի գծով հասույթի ճանաչման համար գործարքի ավարտվածության աստիճանի որոշման մոտեցումը՝ փաստացի կատարված ծախսումների և պայմանագրով նախատեսված ողջ ծախսումների հարաբերակցություն, կատարված աշխատանքների ուսումնասիրություն, պայմանագրով նախատեսված աշխատանքների ֆիզիկական ավարտվածություն և այլն (եթե պայմանագրերի տարբեր խմբերի համար կիրառվել են տարբեր մոտեցումներ, ապա բացահայտվում են պայմանագրերի յուրաքանչյուր խմբի համար կիրառված մոտեցումը).

թ. Արտարժույթի փոխարժեքային տարբերությունների ճանաչման մոտեցումը՝ փոխարժեքային բոլոր տարբերությունները ճանաչվում են որպես եկամուտ կամ ծախս դրանց առաջացման ժամանակաշրջանում, կամ այն փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջացել են արժույթի ուժեղ արժեզրկման հետևանքով և ազդում են վերջերս արտարժույթով ձևակերպված հաշիվներով ակտիվների ձեռք բերումից առաջացող պարտավորությունների վրա, որոնց մարումը անմիջապես

հնարավոր չէ և այդ փոխարժեքային տարբերությունների համար հեջավորման գործնական միջոցներ չկան, ներառվում են համապատասխան ակտիվի հաշվեկշռային արժեքի մեջ, իսկ մնացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են որպես եկամուտ կամ ծախս դրանց առաջացման ժամանակաշրջանում,

ժ. Փոխառության ծախսումների ճանաչման մոտեցումը՝ բոլոր փոխառության ծախսումները ճանաչվում են որպես ծախս դրանց կատարման ժամանակաշրջանում, կամ անմիջականորեն որակավորվող ակտիվի ձեռք բերման, կառուցման կամ արտադրության հետ կապված ծախսումները ներառվում են որակավորվող ակտիվի հաշվեկշռային արժեքում, իսկ մնացած փոխառության ծախսումները ճանաչվում են որպես ծախս դրանց կատարման ժամանակաշրջանում:

Աղյուսակի հետագա տողերում կամ տեքստի ձևով լրացվում են հաշվապահական հաշվառման քաղաքականության այլ մոտեցումները:

2) Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար կիրառված չափման հիմունքները: Այս բաժնում պետք է նկարագրվեն յուրաքանչյուր ակտիվի և պարտավորության համար կիրառված չափման հիմունքները (սկզբնական արժեք, ընթացիկ արժեք, իրացման արժեք, իրական արժեք, ներկա արժեք և այլն): Երբ ֆինանսական հաշվետվություններում կիրառվում է ավելի քան մեկ չափման հիմունք, բավարար է ներկայացնել ակտիվների և պարտավորությունների դասերը, որոնց նկատմամբ կիրառվել է տվյալ չափման հիմունքը:

72. Այլ բացահայտումներ:

1) Ընդհանուր բնույթի բացահայտումներ: Այս բաժնում պետք է լրացվեն ՖՀՄՍ-ներով պահանջվող, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար օգտակար այլ ընդհանուր բնույթի տեղեկատվությունը: Մասնավորապես, այս բաժնում կազմակերպությունը պետք է բացահայտի կազմակերպության գործառնությունների բնույթի և նրա հիմնական գործունեության նկարագրությունը, աշխատողների թվաքանակը ժամանակաշրջանի վերջի դրությամբ, կամ միջին թվաքանակը՝ ժամանակաշրջանի համար: Երբ կազմակերպության ղեկավարությունը, իր գնահատումներն անելիս, տեղյակ է այնպիսի էական անորոշությունների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկածներ հարուցել կազմակերպության հետագա գործունեության վերաբերյալ, այդ անորոշությունները պետք է բացահայտվեն: Երբ ֆինանսական հաշվետվությունները չեն պատրաստվում կազմակերպության գործունեության անընդհատության հիման վրա, ապա այս փաստը պետք է բացահայտվի՝ այն հիմունքների հետ միասին, որոնցով պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունները, ինչպես նաև պետք է բացահայտվի այն պատճառը, թե ինչու կազմակերպությունը չի համարվում անընդհատ գործող:

2) Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությանը կից ծանոթագրություններ:

ա. 2-րդ՝ "Հիմնական միջոցներ" աղյուսակում ցույց է տրվում կազմակերպության շահագործման մեջ գտնվող մաշվող հիմնական միջոցների (տող 010-053), շահագործման մեջ չգտնվող հիմնական միջոցների (տող 070-093) և հողամասերի (տող 110-112)՝ ըստ հիմնական միջոցների դասերի

1. 3-րդ սյունակում՝ տարեկան մաշվածության դրույքը (տոկոսը),

2. 4-րդ սյունակում՝ նախորդ տարվա վերջի դրությամբ հաշվեկշռային արժեքի, արժեքի, կուտակված մաշվածության, կուտակված արժեզրկման մնացորդը,

3. 5-րդ սյունակում՝ հաշվետու ժամանակաշրջանում հաշվեկշռային արժեքի, արժեքի, կուտակված մաշվածության, կուտակված արժեզրկման ընդամենը ավելացումը,

4. 6-րդ սյունակում՝ հիմնական միջոցների վերագնահատումից հաշվեկշռային արժեքի, արժեքի, կուտակված մաշվածության ավելացումը,
5. 7-րդ սյունակում՝ հաշվետու ժամանակաշրջանում հաշվեկշռային արժեքի, արժեքի, կուտակված մաշվածության, կուտակված արժեգրկման ընդամենը նվազեցումը,
6. 8-րդ սյունակում՝ հիմնական միջոցների վերագնահատումից հաշվեկշռային արժեքի, արժեքի, կուտակված մաշվածության նվազեցումը,
7. 9-րդ սյունակում՝ հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջի դրությամբ հաշվեկշռային արժեքի, արժեքի, կուտակված մաշվածության, կուտակված արժեգրկման մնացորդը:

Հիմնական միջոցներ

Աղյուսակ 2

Դասի անվանումը	Հաշվապահական հաշվառման հաշվային պլանի հաշիվներ	Ձև 5-ի համապատասխան տող
Ընդամենը շահագործման մեջ գտնվող մաշվող հիմնական միջոցներ - հաշվեկշռային արժեք	111,112,124	տող 010 + տող 020 + տող 030 + տող 040 + տող 050
- արժեք		տող 011 + տող 021 + տող 031 + տող 041 + տող 051
- կուտակված մաշվածություն		տող 012 + տող 022 + տող 032 + տող 042 + տող 052
- կուտակված արժեգրկում		տող 013 + տող 023 + տող 033 + տող 043 + տող 053
Ընդամենը շահագործման մեջ չգտնվող հիմնական միջոցներ - հաշվեկշռային արժեք	113,114,124	տող 070 + տող 080 + տող 090
- արժեք		տող 071 + տող 081 + տող 091
- կուտակված մաշվածություն		տող 072+ տող 082 + տող 092
- կուտակված արժեգրկում		տող 073 + տող 083 + տող 093
Ընդամենը հիմնական միջոցներ - հաշվեկշռային արժեք		տող 060 + տող 100 + տող 110
- արժեք		տող 061 + տող 101 + տող 111
- կուտակված մաշվածություն		տող 062 + տող 102
- կուտակված արժեգրկում		տող 063 + տող 103 + տող 112

«Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ» հաշվետվության (ձև 5) 2-րդ՝ "Հիմնական միջոցներ" աղյուսակի 120 տողի 4-րդ և 9-րդ սյունակների գումարները պետք է համապատասխանեն ֆինանսական վիճակի մասին հաշվետվության (Ձև N 1) 1.10 տողի համապատասխանաբար 2-րդ և 3-րդ սյունակների գումարներին:

բ. 3-րդ՝ "Ներդրումային գույք (սկզբնական արժեքի մոդել)" և 4-րդ՝ "Ներդրումային գույք (իրական արժեքի մոդել)" աղյուսակներում ցույց է տրվում որպես ներդրումային գույք դասակարգված և համապատասխանաբար սկզբնական կամ իրական արժեքով հաշվառվող հողի (տող 010-012), շինությունների (տող 020-023)

1. 3-րդ սյունակում՝ մաշվածության դրույքը (տոկոսը),
2. 4-րդ սյունակում՝ նախորդ տարվա վերջի դրությամբ հաշվեկշռային արժեքի, արժեքի, կուտակված մաշվածության, կուտակված արժեգրկման մնացորդը,
3. 5-րդ սյունակում՝ հաշվետու ժամանակաշրջանում հաշվեկշռային արժեքի, արժեքի, կուտակված մաշվածության, կուտակված արժեգրկման ընդամենը ավելացումը,
4. 6-րդ սյունակում՝ ներդրումային գույքի ձեռքբերումից հաշվեկշռային արժեքի, արժեքի ավելացումը,
5. 7-րդ սյունակում՝ ներդրումային գույքի վրա կատարված հետագա ծախսումների կապիտալացումից հաշվեկշռային արժեքի և արժեքի ավելացումը,
6. 8-րդ սյունակում՝ հաշվետու ժամանակաշրջանում հաշվեկշռային արժեքի, արժեքի, կուտակված մաշվածության, կուտակված արժեգրկման ընդամենը նվազեցումը,
7. 9-րդ սյունակում՝ ներդրումային գույքի օտարումից հաշվեկշռային արժեքի, արժեքի, կուտակված մաշվածության և կուտակված արժեգրկման նվազեցումը,
8. 10-րդ սյունակում՝ հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջի դրությամբ հաշվեկշռային արժեքի, արժեքի, կուտակված մաշվածության, կուտակված արժեգրկման մնացորդը:

Սկզբնական արժեքով հաշվառվող ներդրումային գույքի հաշվեկշռային արժեքը որոշվում է որպես դրա արժեքի (հաշիվ 122 "Ներդրումային գույք") և կուտակված մաշվածության (հաշիվ 123 "Սկզբնական արժեքով հաշվառվող ներդրումային գույքի մաշվածություն") ու կուտակված արժեգրկման (հաշիվ 124 "Ոչ ընթացիկ նյութական ակտիվների արժեգրկում" (սկզբնական արժեքով հաշվառվող ներդրումային գույքին վերաբերող մասով)) հանրագումարի տարբերություն:

Իրական արժեքով հաշվառվող ներդրումային գույքի հաշվեկշռային արժեքը որոշվում է որպես դրա արժեքի (հաշիվ 122 "Ներդրումային գույք") և կուտակված արժեգրկման (հաշիվ 124 "Ոչ ընթացիկ նյութական ակտիվների արժեգրկում" (իրական արժեքով հաշվառվող ներդրումային գույքին վերաբերող մասով)) հանրագումարի տարբերություն:

գ. 5-րդ՝ "Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցներ" աղյուսակում ցույց է տրվում կազմակերպության ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների (տող 010-043), ըստ դասերի

1. 3-րդ սյունակում՝ նախորդ տարվա վերջի դրությամբ հաշվեկշռային արժեքի, արժեքի, կուտակված մաշվածության, կուտակված արժեգրկման մնացորդը,
2. 4-րդ սյունակում՝ հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջի դրությամբ հաշվեկշռային արժեքի, արժեքի, կուտակված մաշվածության, կուտակված արժեգրկման մնացորդը:

Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը որոշվում է որպես դրա արժեքի (հաշիվ 119 "Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցներ") և կուտակված մաշվածության (հաշիվ 121 "Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների մաշվածություն") ու կուտակված արժեգրկման (հաշիվ 124 "Ոչ ընթացիկ նյութական ակտիվների արժեգրկում" (ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցներին վերաբերող մասով)) հանրագումարի տարբերություն:

050 տողում ցույց է տրվում ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը (տող 010 + տող 020 + տող 030 + տող 040):

051 տողում ցույց է տրվում ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների արժեքը (տող 011 + տող 021 + տող 031 + տող 041):

052 տողում ցույց է տրվում ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների կուտակված մաշվածությունը (տող 012 + տող 022 + տող 032 + տող 042):

053 տողում ցույց են տրվում ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների կուտակված արժեզրկումը (տող 013 + տող 023 + տող 033 + տող 043):

դ. 6-րդ՝ "Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ" աղյուսակում ցույց է տրվում կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցների (տող 010), տեղակայման ենթակա սարքավորումների (տող 020), հիմնական միջոցների վրա կապիտալացվող հետագա ծախսումների (տող 030) և կապալառուի կողմից կառուցվող հիմնական միջոցների (տող 040)

1. 3-րդ սյունակում՝ նախորդ տարվա վերջի դրությամբ մնացորդը,
2. 4-րդ սյունակում՝ հաշվետու ժամանակաշրջանում ավելացումը,
3. 5-րդ սյունակում՝ հաշվետու ժամանակաշրջանում նվազեցումը,
4. 6-րդ սյունակում՝ հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջի դրությամբ մնացորդը:

050 տողում ցույց է տրվում ընդամենը անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվները (տող 010 + տող 020 + տող 030 + տող 040):

Աղյուսակի 050 տողի 3-րդ և 6-րդ սյունակների գումարները պետք է համապատասխանեն ֆինանսական վիճակի մասին հաշվետվության (Ձև N 1) 1.11 տողի համապատասխանաբար 2-րդ և 3-րդ սյունակների գումարներին:

ե. 7-րդ՝ "Ոչ նյութական ակտիվներ" աղյուսակի 010-093 տողերում ցույց է տրվում ոչ նյութական ակտիվների (բացառությամբ գույվիլի և անավարտ ոչ նյութական ակտիվների) ըստ դասերի

1. 3-րդ սյունակում՝ ամորտիզացիայի դրույքը (տոկոսը),
2. 4-րդ սյունակում՝ նախորդ տարվա վերջի դրությամբ հաշվեկշռային արժեքի, արժեքի, կուտակված ամորտիզացիայի, կուտակված արժեզրկման մնացորդը,
3. 5-րդ սյունակում՝ հաշվետու ժամանակաշրջանում ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքի, արժեքի, կուտակված ամորտիզացիայի, կուտակված արժեզրկման ընդամենը աճը,
4. 6-րդ սյունակում՝ հաշվետու ժամանակաշրջանում ներստեղծումից ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքի, արժեքի աճը,
5. 7-րդ սյունակում՝ հաշվետու ժամանակաշրջանում վերագնահատումից ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքի, արժեքի, կուտակված ամորտիզացիայի աճը,
6. 8-րդ սյունակում՝ հաշվետու ժամանակաշրջանում ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքի, արժեքի, կուտակված ամորտիզացիայի, կուտակված արժեզրկման ընդամենը նվազումը,
7. 9-րդ սյունակում՝ հաշվետու ժամանակաշրջանում դուրսգրումից ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքի, արժեքի, կուտակված ամորտիզացիայի, կուտակված արժեզրկման նվազումը,
8. 10-րդ սյունակում՝ հաշվետու ժամանակաշրջանում վերագնահատումից ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքի, արժեքի, կուտակված ամորտիզացիայի նվազումը,
9. 11-րդ սյունակում՝ հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջի դրությամբ ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքի, արժեքի, կուտակված ամորտիզացիայի, կուտակված արժեզրկման մնացորդը:

Ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքը որոշվում է որպես արժեքի (հաշիվ 131 "Ոչ նյութական ակտիվներ") և կուտակված ամորտիզացիայի՝ (հաշիվ 132 "Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա") ու կուտակված արժեզրկման

(հաշիվ 136 "Ոչ նյութական ակտիվների արժեզրկում") հանրագումարի տարբերություն:

100 տողում ցույց է տրվում ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքը (տող 010 + տող 020 + տող 030 + տող 040 + տող 050 + տող 060 + տող 070 + տող 080 + տող 090):

101 տողում ցույց է տրվում ոչ նյութական ակտիվների արժեքը (տող 011 + տող 021 + տող 031 + տող 041 + տող 051 + տող 061 + տող 071 + տող 081 + տող 091):

102 տողում ցույց է տրվում ոչ նյութական ակտիվների կուտակված ամորտիզացիան (տող 012 + տող 022 + տող 032 + տող 042 + տող 052 + տող 062 + տող 072 + տող 082 + տող 092):

103 տողում ցույց են տրվում ոչ նյութական ակտիվների կուտակված արժեզրկումը (տող 013 + տող 023 + տող 033 + տող 043 + տող 053 + տող 063 + տող 073 + տող 083 + տող 093):

Աղյուսակի 100 տողի 4-րդ և 11-րդ սյունակների գումարները պետք է համապատասխանեն ֆինանսական վիճակի մասին հաշվետվության (Ձև N 1) 1.12 տողի 2-րդ և 3-րդ սյունակների գումարներին:

գ. 8-րդ՝ "Անավարտ ոչ նյութական ակտիվներ" աղյուսակում ցույց է տրվում մշակման ընթացքում գտնվող ոչ նյութական ակտիվների (տող 010), ոչ նյութական ակտիվների վրա կապիտալացվող հետագա ծախսումների (տող 020)

1. 3-րդ սյունակում՝ նախորդ տարվա վերջի դրությամբ մնացորդը,
2. 4-րդ սյունակում՝ հաշվետու ժամանակաշրջանում ավելացումը,
3. 5-րդ սյունակում՝ հաշվետու ժամանակաշրջանում նվազեցումը,
4. 6-րդ սյունակում՝ հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջի դրությամբ մնացորդը:

Անավարտ ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքը որոշվում է որպես արժեքի՝ (հաշիվ 133 "Անավարտ ոչ նյութական ակտիվներ") և կուտակված արժեզրկման (136 "Ոչ նյութական ակտիվների արժեզրկում" (անավարտ ոչ նյութական ակտիվներին վերաբերող մասով)) տարբերություն:

030 տողում ցույց է տրվում 010 և 020 տողերի հանրագումարը:

է. 9-րդ՝ "Ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալում (ինքնարժեքի մեթոդով հաշվառվող)" աղյուսակում ցույց է տրվում դուստր ընկերություններում (տող 010), ասոցիացված կազմակերպություններում (տող 020), համատեղ վերահսկվող միավորներում (տող 030) ինքնարժեքի մեթոդով հաշվառվող ոչ ընթացիկ ներդրումների

1. 3-րդ սյունակում՝ նախորդ տարվա վերջի դրությամբ մնացորդը,
2. 4-րդ սյունակում՝ հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջի դրությամբ մնացորդը:

040 տողում ցույց է տրվում 010, 020 և 030 տողերի հանրագումարը:

Աղյուսակի 040 տողի 3-րդ և 4-րդ սյունակների գումարները պետք է համապատասխանաբար 2-րդ և 3-րդ սյունակների գումարներին:

ը. 10-րդ՝ "Այլ դեբիտորական պարտավորություններ" աղյուսակում ցույց է տրվում բյուջեի գծով կարճաժամկետ դեբիտորական պարտքերի (տող 010), պարտադիր սոցիալական ապահովագրության գծով կարճաժամկետ դեբիտորական պարտքերի (տող 020), առհաշիվ տրված գումարների գծով ընթացիկ դեբիտորական պարտքերի (տող 030), այլ եկամուտների գծով դեբիտորական պարտքերի (տող 040) և այլ ընթացիկ դեբիտորական պարտքերի (տող 050)

1. 3-րդ սյունակում՝ նախորդ տարվա վերջի դրությամբ մնացորդը,
2. 4-րդ սյունակում՝ հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջի դրությամբ մնացորդը:

060 տողում ցույց է տրվում 010, 020, 030, 040 և 050 տողերի հանրագումարը:
թ. 11-րդ՝ "Այլ ակտիվներ" աղյուսակում ցույց է տրվում նյութերի (տող 010), արագամաշ առարկաների (տող 020), անավարտ արտադրանքի (տող 030), ապրանքների (տող 040), ճանապարհին դրամական միջոցների (տող 050), տրամադրված երկարաժամկետ փոխառությունների գծով ստացվելիք համախառն մուտքերի (տող 060), տրամադրված կարճաժամկետ փոխառությունների գծով ստացվելիք համախառն մուտքերի (տող 070)

1. 3-րդ սյունակում՝ նախորդ տարվա վերջի դրությամբ մնացորդը,
2. 4-րդ սյունակում՝ հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջի դրությամբ մնացորդը:

080 տողում ցույց է տրվում 010, 020, 030, 040, 050, 060 և 070 տողերի հանրագումարը:

ժ. 12-րդ՝ "Բանկերից ստացված փոխառություններ և վարկեր" աղյուսակի 010 տողում ցույց է տրվում կազմակերպության երկարաժամկետ բանկային վարկերի, 020 տողում՝ երկարաժամկետ փոխառությունների, 030 տողում՝ ֆինանսական վարձակալության գծով երկարաժամկետ պարտավորությունների

1. 3-րդ սյունակում՝ նախորդ տարվա վերջի դրությամբ զուտ գումարի, համախառն գումարների, չկրած տոկոսային ծախսերի մնացորդը,
2. 4-րդ սյունակում՝ հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջի դրությամբ զուտ գումարի, համախառն գումարների, չկրած տոկոսային ծախսերի մնացորդը:

Երկարաժամկետ բանկային վարկերի զուտ գումարը որոշվում է որպես դրանց գծով վճարվելիք համախառն գումարների (հաշիվ 411 "Երկարաժամկետ բանկային վարկերի գծով վճարվելիք համախառն գումարներ") և չկրած տոկոսային ծախսերի (հաշիվ 414 "Չկրած տոկոսային ծախսեր ամորտիզացված արժեքով հաշվառվող երկարաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով") (երկարաժամկետ բանկային վարկերին վերաբերող մասով) տարբերություն:

Երկարաժամկետ փոխառությունների զուտ գումարը որոշվում է որպես դրանց գծով վճարվելիք համախառն գումարների (հաշիվ 412 "Երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարներ") և չկրած տոկոսային ծախսերի (հաշիվ 414 "Չկրած տոկոսային ծախսեր ամորտիզացված արժեքով հաշվառվող երկարաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով") (երկարաժամկետ փոխառություններին վերաբերող մասով) տարբերություն:

Ֆինանսական վարձակալության գծով երկարաժամկետ պարտավորությունների զուտ գումարը որոշվում է որպես դրա գծով վճարվելիք համախառն գումարների (հաշիվ 413 "Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարներ") և չկրած տոկոսային ծախսերի (հաշիվ 414 "Չկրած տոկոսային ծախսեր ամորտիզացված արժեքով հաշվառվող երկարաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով") (ֆինանսական վարձակալությանը վերաբերող մասով) տարբերություն:

040 տողում ցույց է տրվում երկարաժամկետ բանկային վարկերի, փոխառությունների և ֆինանսական վարձակալության գծով զուտ գումարների հանրագումարը (տող 010 + տող 020 + տող 030):

041 տողում ցույց է տրվում երկարաժամկետ բանկային վարկերի, փոխառությունների և ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարների հանրագումարը (տող 011 + տող 021 + տող 031):

042 տողում ցույց է տրվում երկարաժամկետ բանկային վարկերի, փոխառությունների և ֆինանսական վարձակալության գծով չկրած տոկոսային ծախսերի հանրագումարը (տող 012 + տող 022 + տող 032):

050 տողում ցույց է տրվում կազմակերպության կարճաժամկետ բանկային վարկերի, 060 տողում՝ կարճաժամկետ փոխառությունների, 070 տողում՝

երկարաժամկետ բանկային վարկերի կարճաժամկետ մասի և 080 տողում՝ երկարաժամկետ փոխառությունների կարճաժամկետ մասի

3. 3-րդ սյունակում՝ նախորդ տարվա վերջի դրությամբ զուտ գումարի, համախառն գումարների, չկրած տոկոսային ծախսերի մնացորդը,

4. 4-րդ սյունակում՝ հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջի դրությամբ զուտ գումարի, համախառն գումարների, չկրած տոկոսային ծախսերի մնացորդը:

Կարճաժամկետ բանկային վարկերի զուտ գումարը որոշվում է որպես դրանց գծով վճարվելիք համախառն գումարների (հաշիվ 511 "Կարճաժամկետ բանկային վարկերի գծով վճարվելիք համախառն գումարներ") և չկրած տոկոսային ծախսերի (հաշիվ 516 "Չկրած տոկոսային ծախսեր ամորտիզացված արժեքով հաշվառվող կարճաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով") (կարճաժամկետ բանկային վարկերին վերաբերող մասով) տարբերություն:

Կարճաժամկետ փոխառությունների զուտ գումարը որոշվում է որպես դրանց գծով վճարվելիք համախառն գումարների (հաշիվ 513 "Կարճաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարներ") և չկրած տոկոսային ծախսերի (հաշիվ 516 "Չկրած տոկոսային ծախսեր ամորտիզացված արժեքով հաշվառվող կարճաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով") (կարճաժամկետ փոխառություններին վերաբերող մասով) տարբերություն:

Երկարաժամկետ բանկային վարկերի կարճաժամկետ մասի զուտ գումարը որոշվում է որպես դրանց գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մասի (հաշիվ 512 "Երկարաժամկետ բանկային վարկերի գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս") և չկրած տոկոսային ծախսերի (հաշիվ 516 "Չկրած տոկոսային ծախսեր ամորտիզացված արժեքով հաշվառվող կարճաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով") (երկարաժամկետ բանկային վարկերի կարճաժամկետ մասին վերաբերող մասով) տարբերություն:

Երկարաժամկետ փոխառությունների կարճաժամկետ մասի զուտ գումարը որոշվում է որպես դրանց գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մասի հաշիվ 514 "Երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարների կարճաժամկետ մաս" և չկրած տոկոսային ծախսերի (հաշիվ 516 "Չկրած տոկոսային ծախսեր ամորտիզացված արժեքով հաշվառվող կարճաժամկետ ֆինանսական պարտավորությունների գծով") (երկարաժամկետ փոխառությունների կարճաժամկետ մասին վերաբերող մասով) տարբերություն:

090 տողում ցույց է տրվում կարճաժամկետ բանկային վարկերի, կարճաժամկետ փոխառությունների, երկարաժամկետ բանկային վարկերի կարճաժամկետ մասի և երկարաժամկետ փոխառությունների կարճաժամկետ մասի գծով զուտ գումարների հանրագումարը (տող 050 + տող 060 + տող 070 + տող 080):

091 տողում ցույց է տրվում կարճաժամկետ բանկային վարկերի, կարճաժամկետ փոխառությունների, երկարաժամկետ բանկային վարկերի կարճաժամկետ մասի և երկարաժամկետ փոխառությունների կարճաժամկետ մասի գծով վճարվելիք համախառն գումարների հանրագումարը (տող 051 + տող 061 + տող 071 + տող 081):

092 տողում ցույց է տրվում կարճաժամկետ բանկային վարկերի, կարճաժամկետ փոխառությունների, երկարաժամկետ բանկային վարկերի կարճաժամկետ մասի և երկարաժամկետ փոխառությունների կարճաժամկետ մասի գծով չկրած տոկոսային ծախսերի հանրագումարը (տող 052 + տող 062 + տող 072 + տող 082):

100 տողում ցույց է տրվում 040 և 090 տողերի հանրագումարը:

Աղյուսակի 100 տողի 3-րդ և 4-րդ սյունակների գումարները պետք է համապատասխանեն ֆինանսական վիճակի մասին հաշվետվության (Ձև N 1) 2.1 տողի համապատասխանաբար 2-րդ և 3-րդ սյունակներին:

ժա. 13-րդ՝ "Այլ կրեդիտորական պարտավորություններ" աղյուսակում ցույց են տրվում բյուջեին (տող 0100), պարտադիր սոցիալական ապահովագրության գծով

(տող 020), աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով (տող 030), մասնակիցներին (հիմնադիրներին) (տող 040) և այլ (տող 050) կարճաժամկետ կրեդիտորական պարտքերի՝

1. 3-րդ սյունակում՝ նախորդ տարվա վերջի դրությամբ մնացորդը,
2. 4-րդ սյունակում՝ հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջի դրությամբ մնացորդը:

0112 տողում ցույց է տրվում ընդամենը կարճաժամկետ կրեդիտորական պարտքը բյուջեին (հաշիվ 524 "Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին") (տող 0101 + տող 0102 + տող 0103 + տող 0104 + տող 0105 + տող 0106 + տող 0107 + տող 0108 + տող 0109 + տող 0110 + տող 0111):

057 տողում ցույց է տրվում գործառնական վարձակալության (տող 051), տույժերի, տուգանքների (տող 052), ապահովագրավճարների (տող 053), ձեռք բերված ձեռնարկատիրական գործունեության (տող 054), աշխատակիցներին առհաշիվ տրված գումարների (տող 055) և աշխատակիցներին այլ գործառնությունների գծով (056) կրեդիտորական պարտքերի հանրագումարը:

Աղյուսակի 060 տողի 3-րդ և 4-րդ սյունակների գումարները պետք է համապատասխանեն ֆինանսական վիճակի մասին հաշվետվության (Ձև N 1) 2.4 տողի համապատասխանաբար 2-րդ և 3-րդ սյունակների գումարներին:

ժբ. 14-րդ՝ "Պահուստներ" աղյուսակում ցույց է տրվում կազմակերպության պահուստների (425 "Ոչ ընթացիկ պահուստներ" և հաշիվ 543 "Ընթացիկ պահուստներ" հաշիվներ), ըստ դասերի՝

1. 3-րդ սյունակում՝ նախորդ տարվա վերջի դրությամբ մնացորդը,
2. 4-րդ սյունակում՝ հաշվետու ժամանակաշրջանում կատարված պահուստավորումների հաշվին ավելացումը,
3. 5-րդ սյունակում՝ հաշվետու ժամանակաշրջանում զեղչման ազդեցության ճշգրտման հետևանքով ավելացումը,
4. 6-րդ սյունակում՝ հաշվետու ժամանակաշրջանում պահուստների օգտագործման հետևանքով նվազեցումը,
5. 7-րդ սյունակում՝ հաշվետու ժամանակաշրջանում պահուստների հակադարձումների հետևանքով նվազեցումը,
6. 8-րդ սյունակում՝ հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջի դրությամբ մնացորդը:

050 տողում ցույց է տրվում 010, 020, 030 և 040 տողերի հանրագումարը:

Աղյուսակի 050 տողի 3-րդ և 8-րդ սյունակների գումարները պետք է համապատասխանեն ֆինանսական վիճակի մասին հաշվետվության (Ձև N 1) 2.6 տողի համապատասխանաբար 2-րդ և 3-րդ սյունակների գումարներին:

ժգ. 15-րդ՝ "Այլ պարտավորություններ" աղյուսակում ցույց է տրվում 517 "Առևտրական նպատակով պահվող ֆինանսական պարտավորություններ" (տող 010), 415 "Որպես հեջավորման գործիք նախատեսված ոչ ընթացիկ պարտավորություններ" և 518 "Որպես հեջավորման գործիք նախատեսված ընթացիկ ֆինանսական պարտավորություններ" (տող 020), 542 "Ընթացիկ պարտավորություններ հետաձգված հարկերի գծով" (տող 030) հաշիվների՝

1. 3-րդ սյունակում՝ նախորդ տարվա վերջի դրությամբ մնացորդը,
2. 4-րդ սյունակում՝ հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջի դրությամբ մնացորդը:

040 տողում ցույց է տրվում 010, 020 և 030 տողերի հանրագումարը:

Աղյուսակի 040 տողի 3-րդ և 4-րդ սյունակների գումարները պետք է համապատասխանեն ֆինանսական վիճակի մասին հաշվետվության (Ձև N 1) 2.10 տողի համապատասխանաբար 2-րդ և 3-րդ սյունակների գումարներին:

3) "Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությանը կից ծանոթագրությունների այլ բացահայտումներ" բաժնում պետք է լրացվեն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներով պահանջվող, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար օգտակար՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությանը կից ծանոթագրությունների այլ բացահայտումներ:

16-րդ՝ "Արտահաշվեկշռային հաշիվներ" աղյուսակի 010 տողում ցույց է տրվում գործառնական վարձակալությամբ ընդունված հիմնական միջոցների (հաշիվ 911 "Գործառնական վարձակալությամբ ընդունված հիմնական միջոցներ"), 020 տողում՝ պատասխանատու պահպանման ընդունված ապրանքանյութական արժեքների (հաշիվ 912 "Պատասխանատու պահպանման ընդունված ապրանքանյութական արժեքներ"), 030 տողում՝ վերամշակման ընդունված նյութերի (հաշիվ 913 "Վերամշակման ընդունված նյութեր"), 040 տողում՝ տեղակայման ընդունված սարքավորումների (հաշիվ 914 "Տեղակայման ընդունված սարքավորումներ"), 050 տողում՝ կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերով ընդունված ապրանքների (հաշիվ 915 "Կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերով ընդունված ապրանքներ"), 060 տողում՝ որպես գրավ պահվող ակտիվների (հաշիվ 916 "Որպես գրավ պահվող ակտիվներ"), 070 տողում՝ հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող միջոցների (հաշիվ 921 "Հավատարմագրային կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող միջոցներ"), 080 տողում՝ հանձնուրդի (կոմիսիայի) և հանձնարարության (կոնսիգնացիայի) պայմանագրերի համաձայն ստացված միջոցների (հաշիվ 922 "Կոմիսիայի և կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցներ"), 090 տողում՝ հավատարմագրային կառավարմամբ և բրոքերային գործունեությամբ առաջացած դեբիտորական պարտքեր և տրամադրված փոխառությունների (հաշիվ 923 "Հավատարմագրային կառավարմամբ և բրոքերային գործունեությամբ առաջացած դեբիտորական պարտքեր և տրամադրված փոխառություններ"), 100 տողում՝ հավատարմագրային կառավարման և կոմիսիայի ու կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցների գծով պարտավորությունների (հաշիվ 924 "Հավատարմագրային կառավարման և կոմիսիայի ու կոնսիգնացիայի պայմանագրերի համաձայն ստացված միջոցների գծով պարտավորություններ"), 110 տողում՝ հիմնադրի (հաճախորդի) ֆինանսական արդյունքի (հաշիվ 925 "Հիմնադրի (հաճախորդի) ֆինանսական արդյունք"), 120 տողում՝ հավատարմագրային կառավարմամբ և բրոքերային գործունեությամբ առաջացած կրեդիտորական պարտքերի և ստացված փոխառությունների (հաշիվ 926 "Հավատարմագրային կառավարմամբ և բրոքերային գործունեությամբ առաջացած կրեդիտորական պարտքեր և ստացված փոխառություններ"), 130 տողում՝ պայմանական պարտավորությունների (հաշիվ 931 "Պայմանական պարտավորություններ"), 140 տողում՝ պայմանական ակտիվների (հաշիվ 932 "Պայմանական ակտիվներ"), 150 տողում՝ հարկային հաշվառման նպատակներով դուրս գրված դեբիտորական պարտքերի (հաշիվ 941 "Հարկային հաշվառման նպատակներով դուրս գրված դեբիտորական պարտքեր"), 160 տողում՝ հարկային հաշվառման նպատակներով դուրս գրված կրեդիտորական պարտքերի (հաշիվ 942 "Հարկային հաշվառման նպատակներով դուրս գրված կրեդիտորական պարտքեր"), 170 տողում՝ չհատուցված հարկային վնասի (հաշիվ 943 "Չհատուցված հարկային վնաս"), 180 տողում՝ գրավադրված ակտիվների (հաշիվ 944 "Գրավադրված ակտիվներ"), 190 տողում՝ խիստ հաշվառման բլանկների (հաշիվ 945 "Խիստ հաշվառման բլանկներ"), 200 տողում՝ պարբերական և մասնագիտական գրականության (հաշիվ 946 "Պարբերական և մասնագիտական գրականություն") և 210 տողում՝ շահագործման մեջ գտնվող փոքրարժեք հիմնական միջոցների և

արագամաշ առարկաների (հաշիվ 947 "Շահագործման մեջ գտնվող փոքրածեր հիմնական միջոցներ և արագամաշ առարկաներ")

ա. 3-րդ սյունակում՝ նախորդ տարվա վերջի դրությամբ մնացորդը,

բ. 4-րդ սյունակում՝ հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջի դրությամբ մնացորդը:

4) Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությանը կից ծանոթագրություններ:

ա. 17-րդ՝ "Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն ծախսերի՝ ըստ բնույթի դասակարգմամբ" աղյուսակի 3-րդ և 4-րդ սյունակներում լրացվում են համապատասխանաբար նախորդ և հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) տվյալները:

Աղյուսակի տողերում ցույց են տրվում.

1. "Գործառնություններից եկամուտ" հոդվածում (տող 010)՝ թողարկված արտադրանքի, ապրանքների, կատարված աշխատանքների և մատուցված ծառայությունների իրացումից զուտ հասույթը՝ առանց անուղղակի հարկերի: Այս տողի 3-4-րդ սյունակներում լրացված գումարները պետք է համապատասխանեն "Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության" (ձև N 2 և ձև N 2.1) 010 տողի 3-4-րդ սյունակների գումարներին,

2. "Գործառնական այլ եկամուտներ" հոդվածում (տող 020) ցույց են տրվում գործառնական գործունեությունից ստացված այլ եկամուտները: Այս տողի 3-4-րդ սյունակներում լրացված գումարները պետք է համապատասխանեն "Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության" (ձև N 2 և ձև N 2.1) 070 տողի 3-4-րդ սյունակների գումարներին,

3. "Պատրաստի և անավարտ արտադրության մնացորդի փոփոխություն" հոդվածում (տող 030) պատրաստի և անավարտ արտադրության վերջնական և սկզբնական մնացորդների տարբերությունը:

4. "Այլ կապիտալացված ծախսումներ" հոդվածում (տող 040) ցույց է տրվում այլ կապիտալացված ծախսումների մեծությունը (8-րդ դասի հաշիվների կրեդիտի և ակտիվները հաշվառող հաշիվների (բացառությամբ անավարտ արտադրությունը, արտադրանքը և ապրանքները հաշվառող հաշիվների) դեբետի թղթակցության գումարը),

5. "Օգտագործված հումք և նյութեր" հոդվածում (տող 050) ցույց է տրվում սեփական կարիքների նպատակով օգտագործված հումքի, նյութերի գումարը (211 "Նյութեր" հաշիվի կրեդիտի և 8-րդ դասի հաշիվների, 712 "Իրացման ծախսեր", 713 "Վարչական ծախսեր" հաշիվների դեբետի թղթակցության գումարը),

6. "Անձնակազմի գծով ծախսումներ" հոդվածում (տող 060) ցույց է տրվում անձնակազմի գծով ծախսումների մեծությունը (525 "Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովագրության գծով", 527 "Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով" և աշխատակիցների հատուցումները հաշվառող այլ հաշիվների կրեդիտի և 8-րդ դասի հաշիվների, 712 "Իրացման ծախսեր", 713 "Վարչական ծախսեր" հաշիվների դեբետի թղթակցության գումարը),

7. "Մաշվածության և ամորտիզացիայի ծախսումներ" հոդվածում (տող 070) ցույց է տրվում մաշվածության և ամորտիզացիայի գծով ծախսումների մեծությունը (112 "Շահագործման մեջ գտնվող հիմնական միջոցների մաշվածություն", 121 "Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների մաշվածություն", 132 "Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա", 155 "Հետաձգված ծախսերի գծով ոչ ընթացիկ ակտիվների ամորտիզացիա" հաշիվների

կրեդիտի և 8-րդ դասի հաշիվների, 712 "Իրացման ծախսեր", 713 "Վարչական ծախսեր" հաշիվների դեբետի թղթակցության գումարը),

8. "Այլ գործառնական ծախսումներ և ծախսեր" հոդվածում (տող 080) ցույց է տրվում այլ գործառնական ծախսումների մեծությունը (համապատասխան հաշիվների կրեդիտի և 7-րդ և 8-րդ դասի հաշիվների դեբետի թղթակցության գումարը, բացառությամբ 050, 060 և 070 տողերում ներառվածներից):

9. "Գործառնական շահույթ (վնաս)" հոդվածում (տող 090) ցույց է տրվում կազմակերպության գործառնական գործունեության արդյունքը՝ շահույթ կամ վնաս (տող 010 + տող 020 + տող 030 + տող 040 + տող 050 + տող 060 + տող 070 + տող 080):

Վնասի դեպքում սույն հոդվածի գումարը ցույց է տրվում փակագծերում: Այս տողի 3-4-րդ սյունակներում լրացված գումարները պետք է համապատասխանեն "Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության" (ձև N 2 և ձև N 2.1) 090 տողի 3-4-րդ սյունակների գումարներին,

10. "Ոչ գործառնական գործունեությունից շահույթ (վնաս)" հոդվածում (տող 100) կազմակերպության ոչ գործառնական գործունեությունից եկամուտների և ծախսերի տարբերությունը: Այս տողի 3-4-րդ սյունակներում լրացված գումարները պետք է համապատասխանեն "Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության" (ձև N 2 և ձև N 2.1) 130 տողի 3-4-րդ սյունակների գումարներին: Վնասի դեպքում սույն հոդվածի գումարը ցույց է տրվում փակագծերում

11. "Չուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը" հոդվածում (տող 110) ցույց է տրվում հաշվետու ժամանակաշրջանի զուտ շահույթը (վնասը) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը կամ շահութահարկի գծով եկամտի (փոխհատուցման) ավելացումը (տող 090 + տող 100): Այս տողի 3-4-րդ սյունակներում լրացված գումարները պետք է համապատասխանեն "Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության" (ձև N 2 և ձև N 2.1) 140 տողի 3-4-րդ սյունակների գումարներին: Վնասի դեպքում սույն հոդվածի գումարը ցույց է տրվում փակագծերում,

